№ 160 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 24 ՅՈՒԼԻՍԻ
1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԵՐԵՔՇԱԲԹԻ, 24 ՅՈՒԼԻՍԻ № 160

Տարեկան գինը 10 րուբլի· կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի·
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Տիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ·
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ:

Օգոստոսի 1-ից մինչև սեպտ. 1-ը 85 կ.:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
„Ս. Մ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ և Բ. Գ. ՕՋԱՆԵԱՆ"
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ,
որի կանոնադրութիւնը Բարձրագոյնս հաստատված է յունիսի 10-ին 1912 թ., որանով յայտնում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ Ընկերակցութիւնը յուլիսի 1-ից 1912 թ. ձեռնարկել է իր գործունէութեան 1.200.000 րուբլի դրամագլխով.
Ընկերակցութեան Վարչութիւնը գտնվում է Վլադիկավկազում:
Վարչութեան դիրեկտորներ ընտրված են՝
ՍԵՐԳԷՅ ՄԱՐԿՕՎԻՉ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, ԻՎԱՆ ԲՈՂԴԱՆՕՎԻՉ ՕՋԱՆԵԱՆ,
ԳՐԻԳՈՐ ԲՈՂԴԱՆՕՎԻՉ ՕՋԱՆԵԱՆ և ԻՎԱՆ ԻԼԻՉ ՎԱՎԻԼՕՎ:
Ընկերակցութիւնը կատարում է մանուֆակտուրային ապրանքների մեծաքանակ ու հատավաճառ առևտուր, և ունի՝

ՄԵԾԱՔԱՆ. ՎԱՃԱՌՔԻ ՊԱՀԵՍՏՆԵՐ
ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶՈՒՄ
ԳՐՕԶՆԱՅՈՒՄ
ԳԵՕՐԳԻԵՎՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ
և տօնավաճառներում
ԳԵՕՐԳԻԵՎՍԿՈՒՄ
ԳՐՕԶՆԱՅՈՒՄ.

ՀԱՏԱՎԱՃԱՌ ԽԱՆՈՒԹՆԵՐ
ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶՈՒՄ
ԳԵՕՐԳԻԵՎՍԿՈՒՄ
ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ
ԱՐԴՕՆՍԿԱՅԱ կայար.
ՊՐԱՍԿՕՎԵՅԱ գիւղում:
տռ. 524. 10—4

«ՄՇԱԿԻ» ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ հրատարակութեամբ
Լոյս տեսաւ և վաճառվում է
„ՄՇԱԿ" ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ
(«Մշակի» 40-ամեայ յոբելեանի առիթով)
I հատոր
Բաղկացած 7+294 մեծադիր էջից, Գր. Արծրունու գրաւիւր-պատկերով.
Գինը ՄԷԿ րուբլի:
Պահեստը Թիֆլիսում, «Մշակի» գրասենեակում:
«Մշակի» բաժանորդները ճանապարհածախք չեն վճարում:
ԳՐՔԻ ՎԱՃԱՌՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ԱՐԴԻՒՆՔԸ ՅԱՏԿԱՑՎՈՒՄ Է «ՄՇԱԿԻ» ՖՕՆԴԻՆ:
(տռ.) 0—13

«ՄՇԱԿԻ» ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ հրատարակութեամբ
Լոյս տեսաւ և վաճառվում է
Լ. ԴԱՆԻԷԼԵԱՆԻ կազմած
„ՄՇԱԿԻ" ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ (1872–1912)
Հանգուցեալ Գր. Արծրունու, Անդր. Արծրունու, Րաֆֆիի, Գ. Սունդուկեանի, Ա. Արփիարեանի, Յ. Տէր-Մարկոսեանի, Ալ. Քալանթարի և Հ. Առաքելեանի պատկերներով:
Գիրքը բաղկացած է 132 էջից, տպված է ամենալաւ թղթի վրա և պարունակում է իր մէջ «Մշակի» 40 տարվայ համառօտ պատմութիւնը, բոլոր խոշոր երեւոյթների, բելետրիստ. երկերի, նշանաւոր յօդուածների և այդ ժամանակամիջոցում «Մշակի» ունեցած աշխատակիցների և թղթակիցների անունների յիշատակութիւնը:
ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.
Պահեստը Թիֆլիսում, «Մշակի» գրասենեակում:
«Մշակի» բաժանորդները ճանապարհածախք չեն վճարում:
ԳՐՔԻ ՎԱՃԱՌՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ԱՐԴԻՒՆՔԸ ՅԱՏԿԱՑՎՈՒՄ Է «ՄՇԱԿԻ» ՖՕՆԴԻՆ:
(տռ.) 0—10

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բաժանմունքը Թիֆլիսում, Գօլ. պր. 21, տուն Երախտաւոր Ընկ., տելեֆոն № 355.
Պահեստում միշտ կան մեծ քանակութեամբ բոլոր պաստառներ ամենավերջին ոճերով,
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ր. իւրաքանչիւր րուլոն: Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում:
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՁՐԻ:
(հ.ու.) տռ. 154. 50—39

ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԱՅՆԸ

I

Եգիպտոսի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը ներկայ տարուանից հրատարակում է մի պարբերական ամսաթերթ «Միութիւն» անունով, որի մէջ տալիս է տեղեկութիւններ ընկերութեան գործունէութեան մասին և զետեղում է ընդհանուր յօդուածներ, որոնք նպաստում են Ընկերութեան նպատակներին և ծրագիրների ժողովրդականացմանը: Այդ յօդուածների մէջ գտնում ենք մանկավարժական, բժշկական, գիւղատնտեսական, արհեստագիտական, ընդհանուր հասարակական և գրական բովանդակութեամբ նկատողութիւններ.

Այդ հրատարակութեան վերջին՝ յունիսեան համարում կարդում ենք հետևեալը.

«Օսմանեան կառավարութիւնը որոշած ըլլալով բարենորոգիչ յանձնաժողով մը ղրկել Անատոլու, Ազգային Պատրիարքարանը եւ Մասնախումբ մը պիտի ղրկէ հայաբնակ գաւառները՝ տեղական կարիքները մօտէն ուսումնասիրելու և յանձնաժողովի ուշադրութեանը յանձնարարելու նպատակաւ: Կեդրոնական Վարչական Ժողովը (Եգիպտոսի Միութեան), համոզուած թէ ազգային այդ մարմինը կոչուած է բարերար դեր մը կատարել հեռաւոր հայրենակիցներու ներկայ ցաւալի վիճակին վրայ, որոշեց Միութեան կողմէ ևս իբրև պատուիրակ առաջարկել Միութեան պատուոյ անդամ և Կ. Պոլսի Մասնաժողովի ատենադպիր դոկտոր Ն. Տաղաւարեանը, այդ պաշտօնին յարակից ծախքերուն համար 150 օսմանեան ոսկիի գումար մը տրամադրելով:»

Համակրելի և նպատակայարմար են թէ Ազգային Պատրիարքարանի և թէ Եգիպտոսի Միութեան որոշումները: Նրանք լաւ գործի են ձեռնարկել, որը կարող է ունենալ բեղմնաւոր և արդիւնարար հետևանքներ:

Թիւրքահայաստանի տեղական կարիքների ուսումնասիրութիւնը ամենամեծ պահանջներից մէկն է մեր ժամանակակից իրականութեան: Այդ պահանջի մասին մենք յաճախ խօսել ենք. նա զգացվել է երկրի մէջ տարիների ընթացքում և այժմ հերթական է դարձել. նա զգացվել է Բօսֆորի ափերում ապրող հայութեան գիտակից մասի մէջ և այսօր գործնական առաջարկի ձև է ստացել:

Անկասկած է, սակայն, որ թէ պատրիարքարանի ուղարկած Մասնախմբին և թէ Հայկական Միութեան ներկայացուցչին պէտք է օգնութեան գան տեղական մարմինները, տեղական գործիչները ու հայթայթեն կարևոր նիւթեր և ցուցումներ:

Իսկ որպէսզի այդ նիւթերը և ցուցումները լինեն համոզիչ և տպաւորիչ՝ անհրաժեշտ է, որ նրանք լինեն ճշգրիտ, հարազատ, ստուգված և միևնոյն ժամանակ լինեն էական, ազատ բծախնդրական բնաւորութիւնից:

Այդ հանգամանքի վրա հրաւիրում ենք առանձին ուշադրութիւն, որովհետև անցեալում յաճախ վկայ ենք եղել այնպիսի գանգատների, որոնք հիմնված են եղել հակասական ցուցումների վրա և հանդէս են բերվել բռնազբօսիկ եզրակացութիւններով: Մենք ցաւելով տեսել ենք, որ արդար դատերը փչացվել են չափազանցութեան և աւելորդ բծախնդրութիւնների շնորհիւ:

Թիւրքահայաստանի իրականութիւնը ինքն ըստ ինքեան այնքան տխուր է, այնտեղ թագաւորող երևոյթները այնքան բացասական նմուշներ են ասպարէզ բերում, որ ամենևին կարևորութիւն չը կայ արհեստական գունաւորումներ հնարել տպաւորութիւն գործելու համար:

Անդիմակ, մերկ իրականութիւնը այնքան ստուերոտ գծեր ունի, այնքան մաշող կարիքների ալիքներում է տարուբերվում, որ բաւական են միայն եղածի ճշտագոյն պատկերագրութիւնը և նրա կենսական էութեան պարզաբանութիւնը, որ երկրի և ժողովրդի հառաչանքներն ու հեծեծանքները դառնան հասկանալի և ըմբռնելի, որ կեանքի աղաղակող կարիքները պարզայայտ քննութեան ասպարէզ գան իրանց ամբողջ էութեամբ և կենսական նշանակութեամբ:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 յուլիսի

Պետերբուրգ.— Եապօնական կայսրի մահվան առիթով Բարձրագոյն Պալատում երկու շաբաթով սուգ է նշանակված:

—

Նովոչերկասկ.— Կօզակ տանտէրերի լիազօրների ժողովը, քննելով քաղաքային կանոնադրութիւնը Նովոչերկասկի նկատմամբ գործադրելու հնարաւորութեան հարցը, գտաւ, որ ոչ կօզակ ազգաբնակութիւնը ձայնաւորի կազմի մէջ մտցնելը կօզակների իրաւունքների խախտումն է: Որոշեց Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրին արտայայտել հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ, խնդրել դադարեցնել տալ, 87-րդ յօդուածի հիման վրա, քաղաքային կանոնադրութեան վերաբերեալ օրէնքի գործադրութիւնը, Բարձրագոյն հրամանով առաջարկել մշակելու նոր օրէնք, որով կօզակների բոլոր արտօնութիւններն ու սեփականութեան իրաւունքները իրանց համայնական հողերի վերաբերմամբ պահպանվէին, և միջնորդել, որպէսզի կօզակների շահերը շօշափող հարցերը անհապաղ նախապէս ենթարկվէին զինւորական շրջանների քննութեան և ապա գործադրվէին Հիմնական Օրէնքի 96-րդ յօդուածի կարգով:

—

Սեվաստոպօլ.— Նաւային բանտում կալանաւորված 6 նաւաստիները յարձակվեցին պահնորդների վրա և ծովը նետեցին գլխաւորին, որը ջրահեղձ եղաւ: Ապա ցամաք իջան: Երկրորդ պահնորդը գնդակ արձակելով վիրաւորեց փախչող նաւաստուն: Չորսը կալանաւորվեցին, իսկ մէկը՝ փախաւ:

—

Պետերբուրգ.—«Гроза» լրագրի խմբագիրը իր թերթի յուլիսի 20-ի համարում «Бунтъ въ лагерѣ» ֆելիէտօնը զետեղելու համար ենթարկվել է 3 ամսվայ կալանաւորութեան:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը իրաւունք վերապահեց ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին թոյլատրել ուսուցչական սեմինարիաների սաներին ամուսնանալու:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը բացատրել է, որ 1828 թւի կանոնադրութեամբ բացված դըպրոցների ուսուցիչների և ուսուցչուհիների օգնական-օգնականուհիները վայելում են կենսաթոշակային բոլոր իրաւունքները և պարտադիր կերպով պիտի մասնակցեն ժողովրդական ուսուցիչ-ուսուցչուհիների կենսաթոշակային դրամարկղին:

—

Կաչանիկ.— Բօլգարական տեռրօրիստները շուկայում երկու ռումբ նետեցին, որից սպանված են 40 հոգի և վիրաւորված՝ 100:

—

Լօնդօն.— Նաւային գործադուլարար բանւորների 70°/o-ը վերսկսեց աշխատանքները: Գործադուլավար կոմիտէտը կը փակվի առաջիկայ հինգշաբթի:

—

Վաշինգտօն.— Երեք ժամ տևող խորհրդակցութիւնից յետոյ, սենատը Պանամայի ջրանցքի բացման առիթով ընդունեց հետևեալ բանաձևը. «Կառավարութիւնը նորից պէտք է պնդէ Մօնրօէի վարդապետութեան պահանջը»:

—

Սիմլա.— Հնդկաստանում ընդհարումները շարունակվում են: Չինացիները յետ մղեցին Տրաշի վանքի վրա գործված յարձակումը և այժմ պաշարեղէններն են պատրաստում:

—

Լիսաբօն.— Զինւորական իշխանութիւնը խուզարկութեան ենթարկեց «Դէյլի-Մէյլ» լրագրի թղթակցուհի Օրանի բնակարանը: Վերջինս կալանաւորված է, չը նայելով անգլիական դեսպանութեան բողոքներին:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 յուլիսի

Թաւրիզ—Ռուսաց գլխաւոր հիւպատոսի պահանջմամբ Շուջա-ուդ-Դօվլէն համաձայնվեց միայն Թաւրիզում և Սիփէհդարի հետ միասին կառավարել Ատրպատականը: Ոգևորված ժողովուրդը յոյս ունի, որ շուտով խաղաղութիւնը և կարգը կը վերականգնվի: Արդաբիլից հաղորդում են, որ գեներալ Ֆիդարօվին ամենայն օր ներկայանում են շահսէվան ցեղերի պարագլուխները և հնազանդութիւն յայտնում: Յանձնել են երկու թնդանօթներ:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 14 յուլիսի

Նահանգապետ Շուջա-ուդ-Դօվլէի և բելգիացիների յարաբերական աստիճանը գրել էի իմ նախորդ թղթակցութեան մէջ:

Բելգիացի պաշտօնեաները, կախումն ունենալով Թէհրանից, յաճախ հակումն են ցոյց տալիս Թէհրանի չէֆերին և լարվում նահանգական իշխանութեան հետ: Վերջերումս յարաբերութիւնն առաւել սուր կերպարանք ստացաւ. Նահանգապետն ուզում է որ իր ուզած ձևով կարգադրվի փողային հարցը. բայց բելգիացիները կամենում են Թէհրանին լսել: Զայրացած նահանգապետը յայտնեց, որ նրանց չէ ճանաչում, կարգադրեց հասոյթներից գոյացած աւելորդ փողը յանձնել ռուսական բանկին, իսկ իրանք բելգիացիները ունենան միայն կօնտրօլի իրաւունքը, ուրիշ ոչինչ, առանց մատակարարման գործին խառնվելու:

Սիփէհդարը Ատրպատականի նահանգապետ նշանակված լինելու հարցը նորից արթնացաւ. հաստատվում է, որ գալիս է և հասել է արդէն Ղազվին: Մի քանի օր է, որ Թաւրիզի Թուրք վաճառականներն ու հասարակութիւնը գումարումներ են անում, հեռագրում Թէհրան և Հաջի Սամադ խանին պահանջում երկրի դատաւոր: Այսօր շուկանները փակ են և մեծ բազմութիւն մտել է Ջումա մէջիդը և բողոքում է Սիփէհդարի նշանակման դէմ: Կարծես սև ամպեր են կուտակվում նորից Ատրպատականի հորիզոնի վրա:

Երէկ նահանգապետի հրամանով կախաղան բարձրացրին յայտնի Բալա Թաղին՝ սալար մելլի Բաղըր խանի աջ բազուկը:

Ասում են, թէ դեռ մի երկուսն էլ կան, որոնց այսօր վաղը կախելու են: Մեզանում դրութիւնը շատ փափուկ է և կրիտիկական, այնպէս որ ամեն անխոհեմ քայլ պատժի է արժանանում: 5 օր առաջ Մարանդի մօտերը 3 Թաւրիզեցի ճանապարհորդներ ձերբակալվեցին ռուս կօզակների կողմից և յանձնվեցին նահանգապետութեան: Ճանապարհորդների մօտ գտել են նկարչական գործիք: Ճանապարհորդները նկարելիս են եղել իբր թէ խորտակված աւտօմօբիլը և յարակից վրանները: Հարցաքննութիւնից յետոյ՝ իմացվելով 3 հայերի անմեղութիւնը, նահանգապետն ազատ արձակեց նրանց:

Շահսէվանների և ռուսաց ընդհարումների մասին նոր տեղեկութիւններ չը կան: Լեռներում ապաստանած նօմադները երբեմն գիշերով յարձակումներ են անում և յետ մղվում: Ճակատամարտ չը կայ. կռիւը պարտիզանական է: Եթէ հաւատանք Թուրքերի խօսքերին, 15—20000 կռւող շահսէվաններ ուխտել են Ղուրանի վրա մինչև մահ շարունակել պատերազմը:

Ատրպատականում ցորենի բերքն անհաշիւ է այս տարի, բայց դեռ չէժանացաւ: Լաւ ցորենի խալվարն արժէ ոչ պակաս քան 25 թուման. համեմատած տարվայ առատութեան՝ թանգ է այս երկրի համար: Գուցէ օգոստոսից յետոյ աւելի ընկնեն գները, եթէ քաղաքական վիճակը հանգարտ լինի:

Զափազանց առատ է նաև խաղողի բերքը:

Հայկազուն

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 և 22 յուլիսի

Կ. Պոլիս.— Պատգամաւորների պալատ: Առևտրի նախկին մինիստր Հալաճեանը հարցապնդում ուղղեց զինւորական մինիստրին, թէ ինչ է պատճառը, որ միջոցներ չեն ձեռք առնվում այն օֆիցերների դէմ, որոնք քաղաքական լիգա են կազմում և սպառնալիքներ ուղղում պալատին: Նմանապէս՝ թէ ինչ պատճառներից դրդված առանց պալատի նախագահի թոյլտուութեան փոփոխութիւն է կատարվում պալատի մնայական պահակախմբի կազմի մէջ: Պալատը այդ հարցապնդումը ընդունեց անյետաձգելի և ապա անցաւ բիւջէի քննութեանը:

—

Կ. Պոլիս.— Զինւորական մինիստրը հաղորդեց պալատին, որ յուլիսի 26-ին կը պատասխանի իրան ուղղված հարցապնդմանը:

Հրամայված է կալանաւորել կոմիտէտին պատկանող 42 օֆիցերների, որոնք երէկ մասնակցել էին կառավարութեան ձեռնարկութիւններին հակադրելու նպատակով մայրաքաղաքում գումարված միտինգին: Մի մասը արդէն կալանաւորված է:

—

Սոֆիա.—Կ. Պոլսից հաղորդում են, որ զինւորական լիգան և ալբանացիները դժգոհ են կաբինետի դանդաղկոտութիւնից՝ պալատը արձակելու հարցի առիթով: Երկիւղ են կրում, որ լիգան ուժով կը ցրէ պալատը: Հարաւային Ալբանիան միացաւ ապստամբութեանը իր համերաշխութիւնը յայտնելով ապստամբների պահանջներին: Պրիշտինում կայացած ալբանական ժողովը որոշել է էլի 48 ժամ ժամանակամիջոց տալ կաբինետին (որը լրացաւ երէկ երեկոյեան) պալատը արձակելու համար, սպառնալով իր պահանջը չը կատարելու դէպքում գրաւել Ուսկիւբը։ Ստացված տեղեկութիւնների համաձայն, ալբանացիները գրաւելով քաղաքները՝ անմիջապէս գրաւում են արխիվը։ Պարագլուխներն էլ իւրացնում են վարչական իրաւունքները։ Մանաւանդ իշխանութիւնը ձեռք առնելու կողմնակից է Իսա Բոլէտինիացը։

Ռալէկ.—Սահմանագլխի վրա, Գուսինէի մօտ, ընդհարում տեղի ունեցաւ Թիւրքերի և չերնոգորցիների միջև։ Թիւրքերը յետ նահանջեցին։ Չերնոգորցիները գրաւեցին Թիւրքական սահմանի վրա մի քանի կէտեր։

Դիակովօ.—Չերնոգորցիների յարձակման պատճառով Թիւրքերը զէնք են բաժանում սահմանագլխի ազգաբնակութեանը։

Ռակուբ.—Ալբանական պարագլուխների մէջ տարաձայնութիւններ են ծագել յետագայ գործողութիւնների վերաբերմամբ։ Պաշարի պակասութիւն է զգացվում։ Խաղաղ բնակիչներին կողոպտելու դէպքերը բազմացել են։

Պրիզրէն.—Գիշերը մի քանի հարիւր ալբաններ մտան քաղաք։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պոլիս 14 յուլիս

Օսմանեան մինիստրական ու պարլամենտական տագնապը կամ, աւելի պարզ ըսելով, Իթթիհադի տապալումը, որուն մասին գրած էի ձեզ իմ վերջին նամակիս մէջ, հայ կեանքին մէջ ունեցաւ իր անդրադարձումը, որ ոչ նուազ նշանակելի ու դիտելի է։

Դաշնակցականք կացութեան տէրն էին՝ որքան Իթթիհադը կը մնար իշխանութեան գլուխ։ Հիմա հասած կերևայ խոնարհելու ժամը, և կը խոնարհին սարկօրէն, առանց ամչնալու։

«Ազատամարտ» տագնապին օրէն ի վեր շփոթած երևոյթ մը առած է։ Դեռ երկու ամիս առաջ իրենց օրինաւոր հռչակած ընտրութիւնները այսօր ապօրէն կանուանեն, դեռ քանի մը օր առաջ Իթթիհադէն աւելի սահմանադրական և աւելի ազատական մարմին մը Թիւրքիոյ մէջ չկրցող գտնող դաշնակցականները այսօր կը յայտարարեն, թէ Իթթիհադը իր խիստ կեդրոնացման սկզբունքովը և գործադրած անօրէնակ խստութիւններով և ծայրայեղ ազգայնական միտումներով չափազանց պահպանողական եղած էր։

Վերջապէս այսօր կը լզեն՝ ինչ որ քանի մը օր առաջ թքած էին։

Ասով հանդերձ՝ Հալաճեան և Վարդգէս իրարու հետ կը մրցին քաղաքացիական արիութիւն ցոյց տալու համար, և խորհրդարանին բեմէն այնպիսի բուռն, սակայն անխորհուրդ յայտարարութիւններ կընեն, որոնք պարզապէս ծիծաղելի են։

Հալաճեան՝ քան զպապն պապական այնքան Թունդ Իթթիհադական կերևայ և բոլոր օֆիցերները և զինուորները բուռն միջոցներով զապելու կողմն է, կանարգէ զանոնք, ոչ միայն վտանգելով ազգին համար իր անօգուտ գոյութիւնը, այլ կը դաւէ ազգին դէմ, զի իր խօսքերը երբ հայ մէբուսի մը արտայայտութիւնները կրնան չարաչար մեկնուիլ և ամբողջ ազգին վերագրուիլ։

Վարդգէս՝ աւելի միամիտ, դոնքիշօթական պայքարի մը մտած է և բուռն կերպով կարտայայտուի զինուորական շարժման դէմ, որուն առջև ի վերջոյ անխուսափելիօրէն տեղի պիտի տայ խորհրդարանը։

Այս ծիծաղելի դոնքիշօթութիւնները կը մաղթենք որ սուղի չնստին ազգին և կարգահատինք այս իմաստակներուն վրայ, որոնք անել դրութեան մը մատնուած են։

Հիմա բաղդը կը ժպտի Իթիլաֆականներու։ Հետևաբար կերևայ թէ հնչակեաններն են որ պիտի թատերաբեմին վրայ գան։ Հաճելի նորութիւն մը պիտի ըլլար ազգին համար, եթէ այս կուսակցութիւնը, որ նկուն մնացած է սահմանադրութենէն այս կողմ, երբէք դեր մը չկարենալով կատարել, հիմա, երբ բաղդը իրեն չժպտի, ինքն ալ չգլտորի այն սխալներուն և անխոհեմութիւններուն մէջ, որոնք դաշնակցականները զզուելի ըրին ազգին։

Այս անգամ հաւանական է, որ սահմ. ռամկ. կուսակցութիւնն ալ իր ձայնը լսելի ընել տայ և կարենայ ընտրական պայքարը յաջողութեամբ առաջ տանիլ։

Դաշնակցականք այս հեռապատկերին առջև սոսկում կը զգան, վասնզի այս անգամ չպիտի կարենան վեց սիւնակներու վրայ մարդաչափ գիրերով տպել՝

«Քաղաքացինե՛ր, քուէարկեցէք Իթթիհադ-Դաշնակցութիւն ընտրելիներուն ի նպաստ»։

Եւ այս մարդիկը հիմա կը գրեն, թէ իրենք շատոնց ըսած էին, թէ ընտրութիւնները օրինաւորապէս չեն կատարուած։

Եթէ ապօրէն էին, ինչո՞ւ քաղաքացինները կը յորդորէին մասնակցիլ այդ ընտրութիւններուն։ Այս հարցումին պատասխանը տակաւին չէ տրուած դժբաղդաբար, և ասիկա է, որ մեզի կը զարմացնէ։

Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի արտաքին գործերու մինիստրութեան կոչուիլը այսպիտի դժնդակ և տագնապալի պահու մը՝ ցոյց կուտայ արդէն իսկ այս պետական մարդուն տաղանդը։

Դաշնակցականք, որոնք մասնաւորապէս զինուած էին իրեն դէմ Սանասարեան վարժարանի խնդրոյն համար, հիմա կուզեն գնդասեղի հարուածներով վիրաւորել այս մեծ պետական մարդը։

Նորատունկեան էֆ. թէ տեղական և թէ արտասահմանի մամուլի մէջ կը գնահատուի մեծապէս, և միայն «Ազատամարտն» է, որ չի հաւնիր Նորատունկեանի, որուն աշխարհ կը հիանայ։

Նորատունկեան, ըստ «Ազատամարտի», «անգոյն» և «անհետևողական» կը հռչակուի, և հետևեալ օրը սակայն հարկ կը տեսնուի խոստովանելու, թէ անիկա միակ մարդն է Թիւրքիոյ պետական մարդոց մէջ, որ կրնայ արժանաւորապէս կատարել արտաքին գործոց մինիստրի պաշտօնը, անշուշտ որոշ գոյն և հետևողական ոգի ունենալուն համար։ Զի առանց այդ էական բաներուն անիկա չպիտի կարենար երկրին ամենէն կարևոր պաշտօնին մարդն ըլլալ։

Եւ այդ մարդուն «անգոյն» մակդիրը տուողներ՝ արդեօք իրենք ինչ գոյն ունին և ո՞ւր է իրենց հետևողականութիւնը։

Միայն Իթթիհադին հանդէպ իրենց երկսայրի ընթացքը բաւական չէ հաստատելու համար թէ իրենք բացարձակապէս զուրկ են գոյնէ և հետևողականութենէ։

Շաւալլ

ՄԻ ԱՂՄԿԱԼԻ ՆԻՍՏ ՕՍՄ. ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

Կ. Պոլսից հեռագրում են «Рус. Сл.» լրագրին, որ յուլիսի 17-ին պալատի նիստը բաւականին աղմկայոց է եղել։ Նախկին ընդդիմադիր պատգամաւորներն ու ալբանացիները պաշտպանում էին կառավարութեանը։ Հայ պատգամաւոր Վարդգէսը խորհուրդ էր տալիս քուէարկութեան չը դնել կաբինէտին վստահութիւն յայտնելու հարցը, որովհետև նրա պրօգրամը կազմված է շատ անորոշ արտայայտութիւններով և չէ շօշափում տնտեսական հարցեր։

Երիտասարդ-Թիւրքերից մէկը՝ Նազըմը մի ճառ է արտասանում հայրենասիրութեան մասին, որտեղ ի միջի այլոց ասում է.

— Իտալական սօցիալիստները քուէարկութեան ժամանակ տուին ձայներ յօգուտ պատերազմի, մինչ թիւրքաց պատգամաւորները մի այսպիսի դժուարին բոպէին չեն կարողանում միաբանել։ Եթէ ալբանացիները բաւարարութիւն ստանան, նրանցից յետոյ մի առ մի կպահանջեն քիւրդերը, արաբները, հայերը և Թիւրքիայի միւս ազգութիւնները ու կառաջադրեն իրանց պահանջները։

Նազըմի այդ խօսքերը սարսափելի աղմուկ պատճառեցին։ Ալբանացի պատգամաւորներն ու երիտասարդ-Թիւրքերը հայհոյանքների տարափ են թափում իրար հասցէի։ Ալբան-պատգամաւոր Սուլիւս-բէյը բղաւում է.

— Ապստամբութիւնը օրինական է, երբ երկրում տիրում է բռնապետութիւնը։

Երեկոյեան ժամը 7-ին ամբիոն է բարձրանում նորից Հիլմի փաշան։

— Սրանից չորս ժամ առաջ,—ասում է նա,—կառավարութիւնը ստացաւ ինչպէս երկրի ներսից, այնպէս և արտասահմանից շատ կարևոր հեռագիրներ, որոնք ցոյց են տալիս, որ դրութիւնը չափազանց կրիտիկական է։ Մենք պահանջում ենք դարձեալ, որ դուք անյապաղ քուէարկութեան ենթարկէք մեր դեկլարացիայի առիթով ծագած վստահութեան հարցը, ապա թէ ոչ՝ մենք հէնց այս բոպէիս հրաժարական ենք տալիս։

Երիտասարդ-Թիւրքերի լիդէր Սայիդ բէյը ամբիոն բարձրանալով մինիստրից յետոյ անմիջապէս՝ հետևեալ առաջարկութիւնն է անում.

— Ալբանացիների և ուրիշ ազգութիւնների այն պահանջները, որոնք շօշափում են կայսրութեան ամբողջութիւնը, չը պէտք է գոհացվեն։ Սուլթանի իրաւունքները Տրիպօլիսի վրա պէտք է պահպանվեն։ Այդ պայմաններով միայն «Միութիւն և Առաջադիմութիւն» կուսակցութիւնը վստահութեան քուէ կը տայ կաբինէտին։

Հիլմի փաշան առարկում է.

— Կառավարութիւնը հրաժարվում է զանազան տեսակ պարտաւորութիւններ խոստանալ։ Մինիստրութեան պրօգրամը պարունակում է խօսքեր կայսրութեան ամբողջութեան և սուլթանի իրաւունքների մասին։ Հարկ չը կայ բացատրելու, թէ ի՛նչ իրաւունքներ են դրանք։ Միևնոյն ժամանակ կաբինէտը պահանջում է ոչ միայն վստահութիւն յայտնել ամբողջ կաբինէտին, այլ և անձնապէս բոլոր մինիստրներին, որովհետև վիճաբանութիւնների ժամանակ մինիստրներին անուանեցին Աբդիւլ Համիդի ծառաներ։

Երիտասարդ-Թիւրքերի լիդերը այդ բացատրութիւններից յետոյ յետ վերցրեց իր առաջարկը, և պալատը 113 ձայնով ընդդէմ 45-ի, ձեռնպահութեամբ 9 հոգու, վստահութեան քուէ տուեց։

ԹԻՒՐՔ ՕՖԻՑԵՐՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» նախորդ համարում (№ 159) տպված՝ Կ. Պոլսի մեր Թղթակցի նամակում շօշափված էր Թիւրք օֆիցերների միութեան մի շատ կարևոր յայտարարութեան մասին, որով այդ միութիւնը, ի նկատի ունենալով Թիւրքիայի ճգնաժամային վիճակը, դիմում է օսմ. օֆիցերութեանը։ Այդ պատմական խիստ կարևոր վաւերագիրը, որ կրում է «Մի քանի խօսք երկրի իրական կացութեան և օսմանցի լուսամիտ օֆիցերների պարտականութեան մասին» վերնագիրը, տպված է Կ. Պոլսի Թերթերում, և մենք ստորև արտատպում ենք ամբողջովին, քաղելով «Բիւզանդիոնից»։

Օֆիցերներ և յարգելի ընկերներ. Տագնապը, զոր այժմ կանցընէ մեր երկիրը, վերջին օրերս սուր հանգամանք ստացաւ։ Նորէն երևցաւ մեր ազգային անկումին վտանգը։ Կենթադրուէր թէ օսմ. հայրենիքն ազատած էր սահմանադրութիւն հռչակուելով և յառաջ կերթար խաղաղութեան ճամբուն մէջ։ Ընդհակառակն անիկա ընդ առաջ կերթայ կործանումի, նոյն արագութեամբ՝ ինչպէս Աբդիւլ-Համիդի օրով։ Սահմանադրութիւնն եղաւ մեր երկրի համար վերջին փորձը։ Բայց այս փորձն արդիւնքի մի յանգած չըլլալով, Եւրոպայի մէջ այն կարծիքն յառաջ եկաւ, թէ սահմանադրութիւնն անկարող է երկարաձգելու օսմ. կայսրութեան կեանքը, ուրիշ խօսքով՝ թէ օսմանցիներն ալ իրաւունք չունին գոյութիւն ունենալու իբր անկախ տէրութիւն։ Մեծ իմացականութեան պէտք չկայ հասկնալու համար այն հետևանքները, զորս այս կարծիքը պիտի բերէ ազգային կեանքին վրայ։ Բանակին կողմէ յառաջ բերուած յեղափոխութենէն ետքը Եւրոպա պահ մը ընդհատեց մեր կայսրութիւնն անդամահատելու իր ծրագիրներն և սպասողական դիրք բռնեց։ Սակայն տեսնելով որ սահմանադրութիւն ներմուծելու պատրուակին ներքև մենք կը շարունակէինք ու նոյն իսկ կը գերազանցէինք նախկին րէժիմին գործը, Եւրոպա Թողուց այս սպասողական դիրքը՝ ուրիշ ընթացք մը բռնելու համար։ Իտալիոյ յարձակումը մեր հիւսիս ափրիկեան ստացուածքներուն դէմ, ոտնակոխ ընելով միջազգային իրաւանց ամեն սկզբունք, և այս յարձակման հանդէպ Եւրոպայի ցոյց տուած անտարբերութիւնը առաջին դժխեմ, այլ ուշադրաւ նշանը եղան այս նոր ընթացքին։ Պետութեան սպառնացող այս քանդումի վտանգին առջև հարկադրուած ենք կոչ ուղղել օսմանցի օֆիցերներուն, թէև մենք ջերմապէս կը փափագէինք, որ օֆիցերները ետ կենային քաղաքական ամեն գործէ։ Օսմանցիները տակաւին տիրացած չեն սահմանադրական ազատութիւններուն, որոնք կէտ նպատակին եղած էին չորս տարի առաջուան զինուորական ըմբոստութեան։ Օֆիցերները չեն կրնար հաւանիլ այս վերջին չորս տարուան մէջ բռնուած քաղաքականութեան, թէ՛ ի ներքուստ և թէ՛ արտաքուստ, որովհետև այդ քաղաքականութիւնը կը ստորնացնէ օսմանցիութիւնը և կայսրութիւնը կառաջնորդէ իր կործանումին։

Օֆիցերները չպիտի լռեն քմահաճ արարքներու առջև, գործուած ապօրինութեանց և անձնական շահերու հետապնդութեամբ սահմանադրութեան տրուած հարուածներուն առջև։ Բոլոր օսմանցիները, և ամենէն առաջ մենք՝ օֆիցերներս պարտականութիւն ունինք հայրենիքը ազատելու կորուստէ ու քանդումէ։ Պէտք է խորհինք ինչ որ ունինք ընելիք և այն թշուառութեան վրայ, որ մեզ կը սպասէ, երբ հայրենիքը որս ըլլայ օտարներուն։ Անոնք որ այսօր կը խօսին յանուն հայրենասիրութեան և կուզեն զմեզ լծել իրենց կառքին, այն ատեն կը փախչին Եւրոպա, ինչպէս արդէն ըրին, հոն լափելու համար հանդարտօրէն այն դրամը, որով լեցուցած են իրենց գրպանները։ Մինչդեռ մենք, խեղճերս, որ կը յօգնինք հայրենիքին ծառայութեան մէջ, թշուառութեան մէջ պիտի ձգուինք։

Ասոր համար է որ, ընկերներ, հրապարակաւ կը կրկնենք, թէ պէտք է դողանք այն վտանգին առջև, որուն ենթարկուած է հայրենիքը, զի այն գաղափարը տարածուեցաւ թէ մեր դժբաղդութեան պատճառը բանակն է, և որովհետև ազգը կը մեղադրէ օֆիցերները՝ արդի յոռի վարչութեան պատճառաւ։ Ասոր համար, մենք, օֆիցերներս, պէտք է յարատևենք այն պահանջումներուն մէջ, որ կարգախօսն եղան բանակին, երբ անիկա չորս տարի առաջ վերջ տուաւ Աբդիւլ-Համիդի բռնապետութեան։ Պէտք է դիտել, թէ ժողովուրդին միւս ուսեալ դասակարգերն, որ մանաւանդ կը բաղկանան տկար նկարագիր ունեցող հանրային պաշտօնատարներէ, յօժարակամ գործիք կըլլան ամէն կառավարութեան։ Ուստի հայրենիքը փրկելու պարտքը կը ծանրանայ օֆիցերներու ուսերուն վրայ։ Պէտք է դիտել նաև, թէ կառավարութեան ներած յոռի վարչութեան պատճառաւ բանակը ժամանակ չի գտներ զբաղելու իրեն յատուկ պարտականութիւններով, այլ իր գործունէութիւնն ամբողջապէս կը յատկացուի աւելորդ զինուորական արշաւանքներու։

Օֆիցերներ, հայրենիքը ամենէքէն, մանաւանդ բանակէն կը պահանջէ զոհողութեան ոգի և քաղաքական կորով, որովհետև այլապէս մեր վրայ պիտի հրաւիրենք անէծքը ապագայ սերունդներուն և ազգին պժգանքին առարկայ պիտի ըլլանք անտարբեր ըլլալնուս համար հանդէպ սահմանադրութեան բռնաբարումներուն, որուն վրայ մենք երդում ըրած ենք։ Պէտք է որ մենք կատարենք այս զոհողութիւնը, ապա թէ ոչ ժողովուրդը չպիտի կրնայ ազատել օտարներու լուծէն, և մենք բոլորովին պիտի կորսնցնենք մեր անկախ գոյութիւնը։ Ասոր համար կը ձեռնարկենք կատարելու մեր հայրենասիրական պարտականութիւնը, կատարեալ օրինաւորութեամբ և առանց ի նկատ առնելու անձնական ոևէ գաղափար։ Մեր նպատակն այն է թէ բանակը, որուն համար կը գործածուին փոխառութիւններով հայթայթուած այնքան մեծ գումարներ, կարենայ իր ոյժը գործածել ընդդէմ արտաքին թշնամիին և պահէ իր այս ոյժը։ Ըստ որում անկարելի է զօրացնել բանակը առանց ելևմուտքը բարուոքելու, յառաջադրած ենք նաև բարուոքել մեր ելմտական կացութիւնը, որ չի կրնար կատարուիլ, առանց լիակատար գործադրումին սահմանադրական սկզբունքներուն. ուստի կը պահանջենք երաշխաւորութիւններ՝ այս սկզբունքներուն գործադրման համար, և կատարեալ արդարութիւն բանակին համար։ Ահա այս գաղափարն եղաւ մեզ առիթող, որ կազմէինք զինուորական միութիւն մը։

Միւս կողմէ, պատրաստ ենք հնազանդելու հայրենասիրական պարտականութեան, զինուորական պատւի ու մարդկութեան թելադրումներուն։ Կը յայտարարենք նաև, թէ կը ճանչնանք երկրին քաղաքական բոլոր կուսակցութիւնները։ Եթէ մեզի պիտի առարկուի, որ վայրկեանը դէշ ընտրուած է այսպիսի պահանջումներ յարուցանելու համար, մենք ալ կը հարցնենք, թէ արդեօք Երբ պիտի գայ այս յարմար վայրկեանը։ Գուցէ այն ատեն՝ երբ երկիրը բաժան-բաժան ըլլայ և մենք յետին աստիճանին հասած ըլլանք։ Եւ յետոյ, մեր պահանջումներն անձնական բնոյթ չունին բնաւ, այլ թելադրուած են հայրենիքին շահերէն։ Անոնք պիտի ապացուցանեն մեր թշնամիներուն, թէ ի Թիւրքիա չեն պակսիր մարդիկ, որ, երբ խնդիրը գայ հայրենիքը ազատելու վրայ, չեն ընկրկիր ոևէ զոհողութեան առջև։ Ու եթէ մեզ կըսուի, թէ մեր պահանջումներն յոռի տպաւորութիւն պիտի գործեն Եւրոպայի մէջ, մենք ալ կը պատասխանենք, թէ Եւրոպա մենէ աղէկ կը ճանչնայ մեզի։ Եւրոպայի մէջ յոռի տպաւորութիւն գործողը՝ երկրին դէշ կացութիւնն է և ուսեալ դասակարգերուն Թոյլ ու անտարբեր վիճակը, և ո՛չ թէ օրինաւորութիւն հաստատելու համար եղած աշխատութիւնը։ Զինուորական միութիւնը հետևեալ ձգտումները պիտի հետապնդէ. ա) Արդի կառավարութեան տեղ դնել ուրիշ մը, որ ի վիճակի ըլլայ շահելու Եւրոպայի վստահութիւնն ու կազմուած ըլլայ յարգուած և կարող անձնաւորութիւններէ։ բ) Արգիլել անպատասխանատու տարրերու՝ խառնուիլ կառավարական գործերուն։ գ) Լուծել երեսփ. ժողովը, երբ լուրջ քննութիւն մը կատարուելով ապացուցուի, թէ վերջին ընտրութեանց արդիւնքները չեն համապատասխաներ ազգին կամքին, և նոր ընտրութիւններ կազմակերպել այնպէս մը, որ ոստիկանութիւն կամ ոստիկան զօրք չմիջամտեն ընտրական գործերուն։ Գալով բանակին, ահա թէ ի՛նչ կը պահանջենք անոր համար. ա) Բանակէն դուրս վտարել քաղաքականութիւն, անգամ մը որ մեր այս պահանջումները գոհացում գտնեն։ բ) Բանակ դարձնել այն բոլոր օֆիցերները, որ կը գործածուին քաղաքային պաշտօններու մէջ կամ իբր պատուիրակ՝ քաղաքական կուսակցութիւններու։ գ) Մտցնել արդարութեան սկզբունքը բանակին մէջ մանաւանդ հետևեալ չորս կէտերուն վրայ։

ա) Բարձրաստիճան օֆիցերները պէտք է իրենք ալ պատասխանատուութիւն ունենան։ բ) Զինուորական դատարանները պէտք է անկախ ըլլան ու զերծ՝ ոևէ ազդեցութենէ։ գ) Շնորհուկով պէտք չէ տեղի ունենայ օֆիցերներուն բարձրացումը։ դ) Եմէն և ուրիշ տաք երկիրներ ղրկուած օֆիցերներուն դէմ գործուած անիրաւութիւնը պէտք է դարմանուի։ Ահա թէ ինչ կերպով պիտի գործէ զինուորական միութիւնը իր պահանջումներուն գոհացում ստանալու համար։ Մեր խմբին մէջ կազմուած է կոմիտէ մը, որ յետոյ որոշուելիք օր մը յայտարարութեամբ մը պիտի պարզէ մեր պահանջումներն ի մասին երկրին քաղաքականութեան ու բանակին։ Այս յայտարարութիւնը պաշտօնապէս պիտի ներկայացուի ու պիտի պահանջուի անոր գործադրումը։ Եթէ մեր պահանջումները ցըետին տաս չընդունուին, եթէ պատրուակուի, որ կարգապահութիւնը բռնաբարուած է կամ ուրիշ այս տեսակ պատճառաբանութիւններ ըլլան, մեքենայութիւններ, բռնակալութիւն ի գործ դրուին և երկիւղ ազդող պահակազօրքերն ուրիշ տեղեր ղրկուին, այն ատեն մեր խմբին պահեստը կազմող մասը՝ ըստ կացութեան պահանջումներուն, առանց խտրութեան, ամեն միջոց ի գործ պիտի դնէ ու պիտի հեռացնէ զամեն անոնք, որ կընդդիմանան մեր պահանջումներուն ընդունուելուն։

Մեր գործողութիւնները պիտի շարունակուին, մինչև որ մեր պահանջումները վերջնապէս ի գործ դրուին։ Երկիրը կորսուելու վրայ ըլլալով՝ միութեան իւրաքանչիւր անդամը ցոյց պիտի տայ ուղիղ ճամբան այն ընկերներուն, որ կարող են հասկնալ երկրին իրական կացութիւնը։ Անգամ մը, որ խմբին պահանջումներն ընդունուին և համոզում գոյացնենք, թէ անոնք պիտի գործադրուին քաղաքականութեան ու բանակին մէջ, զինուորական միութիւնը լուծուած պիտի նկատուի։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 11 յուլիսի

Հնձաքաղը սկսվել է արդէն և այս տարի սպասվում է խիստ առատ բերք։ Ցանքսերը ոչ մի բնական պատահարի չենթարկվեցին, անձրևները թէ աշնան և թէ գարնան կանոնաւորութեամբ տեղացին, ուստի հացահատիկների բերքը շատ աջող արդիւնք է խոստանում։ Վերջին ժամանակներում անձրևները մի ժամանակ յապաղելով, թէև ջրի տագնապ առաջացաւ, բայց յունիսի վերջերին շատ առատութեամբ տեղալով՝ ամբողջ ցանքսերն էլ ոռոգեցին, ու ջրի տագնապը անհետացաւ իսպառ։ Երկրագործը ուրախ է. նրա երեսը ժպտում է, յուսալով որ առատ բերքը բաւականութիւն է տալիս նրա բազմատեսակ կարիքներին, թէև արտահանութեան միջոցներ չը լինելու պատճառով գուցէ հացահատիկների գինն այնչափ էժանանայ, որ երկրագործը յուսավրէպ լինի, արդէն հնձաքաղի համար բանուորների վարձերը և ուրիշ ծախքեր այնչափ բարձրացել են, որ եթէ արմտիքների գինը շատ էժանանայ, երկրագործը վնասներ կը կրէ՝ փոխանակ օգտվելու առատութիւնից։

Գարնան ցրտերի, անձրևների ու վերջերս տեղացած կարկտախառն անձրևների պատճառով բանջարանոցներ, մրգեղէններ ու խաղողը բաւական վնասներ կրեցին, ուստի մրգեղէնները պակաս են այս տարի, բայց ժողովուրդը նրա համար այնքան էլ հոգ չէ անում. նա ուրախ է որ հացի բերքը առատ է և էժանութեան երես է տեսնում։

Մարակ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ Նիւ-Եօրկում հրատարակվող «Կոչնակ» շաբաթաթերթը հաղորդում է, որ բրիտանական Արտաքին Աստուածաշնչի Ընկերութիւնը, որ հանգուցեալ Մատթէոս II կաթողիկոսի կենդանութեան օրով նրանից խնդրել էր չորս Աւետարանների աշխարհաբարի Թարգմանութիւնը, բայց հանգուցեալ Վեհի վերահաս մահը անկատար էր թողել այս ձեռնարկութիւնը, շուտով դիմում է անելու Նորընտիր Վեհափառին՝ վերջնիս համաձայնութիւնն ստանալու նըպատակով։ Եթէ Վեհ. Հայրապետը իր հաւանութիւնը տայ, յիշեալ Ընկերութիւնը ինքն է հոգալու այդ գործի բոլոր ծախսերը և հրատարակութեան ամբողջ գործը յանձնելու է Էջմիածնի տպարանին, ինչպէս և այդ հրատարակութիւնից ստացված զուտ արդիւնքը յատկացնելու է Մայր Աթոռին։

◆ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին կից վերջերս կազմվեց մի յանձնախումբ, որին յանձնվեց ամուսնական մի նոր օրինագիրք պատրաստել, որը համապատասխանէ ժամանակակից հայ կենցաղին։ Յանձնախումբը, որին անդամակցում են Թիւրքահայ յայտնի հոգևորականներ և օրէնսգէտ աշխարհականներ, իր ստանձնած գործը աջողութեամբ ու փութով առաջ է տանում։ Յանձնախմբի անդամներից մէկը, Գնէլ վ., կազմել է հայ եկեղեցական ժողովների ամուսնական որոշումները։ Յանձնաժողովի անդամներից մի ուրիշը, Թիւրքահայերի նախկին պատրիարք Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեան, պատրաստում է բոլոր քրիստոնեայ ազգերի մէջ գոյութիւն ունեցող օրէնքները։ Իսկ դատավարութեան եղանակի պատրաստութիւնը յանձնվել է նոյն յանձնախմբի անդամ օրէնսգէտ Յակոբեանին։

◆ Կ. Պոլսի ամերիկեան նախորդ դեսպան Քարթըրը, ինչպէս կարդում ենք «Կոչնակում», հետամտում է Չէսթըրի ծրագրի գործադրութեանը և առաջարկել է երկաթուղի կառուցանել Վանից սկսած մինչև Եումուրթալըկ, գիծն անցկացնելով Խարբերդի վրայով։

◆ Էրզրումի նահանգի Քիսքիմի գաւառի Խոտորջուր գիւղախմբի Կասաբայից ամսիս 1-ից մեզ հաղորդում են, որ այդ շրջանի ամարանոցներից մէկում պատահել է հետևեալ քստմնելի դէպքը։ Երեք Թիւրք մի գիշեր բռնի մտնելով ամարանոցներից մին՝ այդտեղ գտնվող մի հարսի և մի կնոջ բռնաբարում են մինչև լոյս ու ապա առաւօտեան հեռանում։ Տեղացիք բողոքում են այդ սրիկաներին ու յանձնում կառավարութեան, թէև կասկածում են նրանց ըստ արժանւոյն պատժվելուն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ «ՄՇԱԿԻ» ՖՕՆԴԻ

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, 23 յուլիսի

«Մշակի» 40-ամեակի Յոբելեանական Յանձնաժողովը շնորհակալութեամբ ստացաւ, յօգուտ «Մշակի» ֆօնդի, Բաքուից 57 ր. (նուիրատուներն են՝ եղբ. Թումանեան 10 ր., Ա. Ասլանեան 5 ր., Աղաւել Յովսէփեան 5 ր., Աւագ Մ. Յովսէփեան 5 ր., Մովսէս Գասպարեան 5 ր., Դանիէլ Մ. Պետրոսեան 5 ր., Ա. Տէր-Սարգսեան 5 ր., Մնացական Կարաչեան 1 ր., Ստեփան Աղամիրզեան 10 ր., Ա. Աստուրեան 3 ր., Օ. Յակովբեան 3 ր., Պետ. Թաշճեան բժիշկ 1 ր., Սար. Մարտիրոսեան 1 ր., Յար. Յարութիւնեան 1 ր. և եղբ. Զարիֆեան 15 դաւ։ Ընդամենը 60 ր. և 15 դաւ., որից դուրս եկած հեռագրի և այլ ծախքեր՝ մնում է 57 ր.), որ նախորդ ստացված 28,005 ր. 17 կ. գումարի վրա աւելացնելով՝ համագումարը կը լինի 28,062 ր. 17 կ.։

Յանձնաժողով

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պետական Դումայի անդամներ ընտրողների երրորդ տեղը բռնում են քաղաքի բնակիչներից ընտրվածները։

Այդպիսիների ընտրութիւններ կատարելու իրաւունք ունեն այն քաղաքները, ուր կայ մեջլիսների ուպրավա և առնվում է պետական տուրք քաղաքի անշարժ կալուածքներից։

Անդրկովկասում այդպիսի քաղաքների շարքին պատկանում են միայն ինքնավարութիւններ ունեցող քաղաքները, ինչպէս և հետևեալները՝ Արդուին, Զուգդիդ և Ռէդուտ-կալէ, Սալիան, Կաղզուան, Արդահան և Օլթի։

Քաղաքային ընտրողների ցուցակները կազմում են քաղաքային ինքնավարութիւնները, ուր կան այդպիսիք, իսկ ինքնավարութիւն չունեցող քաղաքներում այդ ցուցակները կազմում են ոստիկանական հաստատութիւնները։

Քաղաքներում ընտրողների ցուցակները չեն հրատարակվում պաշտօնական թերթում, այլ այդպիսիք ի տես են դրվում այն հաստատութիւնների մէջ, որտեղ կազմվել են։

Ի նկատի առնելով խնդրի կարևորութիւնը՝ այստեղ կրկնում ենք թէ ովքեր իրաւունք ունեն քաղաքային ընտրողների ժողովներում մասնակցելու. 1) այն անձինք, որոնք մի տարուց ոչ պակաս տէր են դարձած անշարժ կալուածքի նահանգական կամ գաւառական քաղաքում, անկախ նրա գնից։ 2) Այն անձինք, որոնք մի տարուց ոչ պակաս առևտրական որևէ գիլդի են վերցնում։ 3) Մի տարուց ոչ պակաս բնակարանային տուրք վճարողները։ 4) Մի տարուց աւելի անձնական աշխատանքների՝ տուրք վճարողները։ 5) Այն անձինք, որոնք թէև բնակարանների էժանութեան պատճառով տուրք չեն վճարում, սակայն մի տարուց աւելի ունեն մի քաղաքում իրանց անունով սեփական բնակարան։ 6) Մի տարուց աւելի որոշ քաղաքում ապրողները և պետութիւնից կենսաթոշակ ստացողները։

Վերևում յիշված բոլոր կատէգորիայի ընտրողները, բացի 5-րդ կատէգորիայից, մտցվում են ընտրական ցուցակների մէջ անկախ ընտրողների յայտարարութիւնից, որովհետև ամենի ցուցակները կազմում են տուրք ստացող համապատասխան հաստատութիւնները և ժամանակին ուղարկում այնտեղ, ուր կազմվում են և տպվում ցուցակները։ Բայց որովհետև բնակարանային հարկ չը վճարողները ոչ մի հաստատութեան կողմից չեն ցուցակագրվում, ուստի նրանք պարտական են, քաղաքային ինքնավարութիւնների կողմից յայտարարած ժամանակամիջոցում, շտապել յայտնել իրանց իրաւունքների համար, որպէսզի մտցնեն իրանց անունները ընտրողական ցուցակների մէջ։ Թիֆլիսի ուպրավայում յայտակալէս տպված բլանկներ կան այդպիսի յայտարարութիւնների մասին. պէտք է մտնել միմիայն և վերցնել։

Իւրաքանչիւր անձնաւորութիւն եթէ մի քանի ընտրական շրջաններում ունի իրաւունք ձայն տալու, պէտք է ինքը նախապէս յայտարարի, թէ որտեղ է ուզում մասնակցել. հակառակ դէպքում նրան կը մտցնեն այն ցուցակի մէջ, ուր նա ապրում է։

Այն անձինք, որոնք կամենում են ընտրութիւններին մասնակցել իրանց ծնողների կամ կնոջ կալքերի ցէնզով, պէտք է նախապէս ներկայացնեն կամ նոտարական կամ ոստիկանութիւնից հաստատված հաւատարմաթերթեր։

Գիւղական համայնքին պատկանող անձինք եթէ քաղաքային կամ հողատէրերի ընտրութիւններին մասնակցելու ցենզ ունենան նոյն գաւառում, պէտք է մասնակցեն միմիայն գիւղական համայնքի ժողովներում։

Ընտրողական ցուցակները պէտք է հրատարակվեն ամենաուշը ընտրութիւններից չորս շաբաթ առաջ և ամեն հնար եղած միջոցներով ազգաբնակութեան ծանօթացնեն այդ ցուցակների հետ։

Այդ ցուցակներում չը նշանակված անձինք իրաւունք չունեն ընտրութիւններին մասնակցելու։ Եթէ այդ ցուցակներում մէկը նշմարի սխալմունք, կարող է երկու շաբաթվայ ընթացքում բողոքել այդ մասին՝ գաւառական ընտրողական ցուցակների համար գաւառական ընտրողական մասնաժողովին, իսկ նահանգական քաղաքներում նահանգական ընտրողական մասնաժողովներին, և եթէ ճիշդ, որ սխալմունք կամ թիւրիմացութիւն թոյլ է տրված, այդպիսին կուղղվի և լրացուցիչ կերպով կը յայտարարվի։

Ընտրողական ժողովները նշանակվում են նահանգապետների կողմից, որի մասին նախապէս յայտարարվում է։

Եթէ ընտրողական շրջանում ձայն ունեցողների թիւը 500-ից պակաս է, այն դէպքում քուէարկութիւնը կատարվում է քուէատուփերով և այդպիսին սկսվում է ճիշդ ժամը 12-ին. քուէարկութիւնը սկսվելուց յետոյ այլ ևս նոր եկողներին իրաւունք չէ տրվում մասնակցելու, իսկ ներկայ եղողները պէտք է այդ ժողովում վերջացնեն քուէարկել՝ բոլոր քուէարկվել ցանկացողներին։

Իսկ եթէ մի որևէ շրջանում ձայն ունեցողների թիւը 500-ից աւելի է, այն ժամանակ քուէարկութիւնը կատարվում է թերթիկներով, և այդպիսին կատարվում է մի օրվայ ընթացքում, առաւօտեան ժամը 9-ից մինչև երեկոյեան 9-ը։

Իւրաքանչիւր ընտրող պարտական է անձամբ ինքը տալ իր քուէն կամ թերթիկը, իսկ նրա անձնաւորութեան ստուգութիւնը կատարում է ընտրութեան մասնաժողովի նախագահը։

Նահանգական ժողովների համար ընտրողներ կամ պատգամաւորներ հաշվում են ընտրված նրանք, որոնք ստանում են մասնակցող ձայների բացարձակ մեծամասնութիւնը, իսկ եթէ հարկաւոր թւից շատ են ընտրվածները, այն ժամանակ համեմատական մեծամասնութիւն ստացողները։ Եթէ հարկաւոր թւով ընտրող-պատգամաւորներ չեն ընտրված, այն դէպքում քուէատուփերով կատարվող ժողովները կրկնվում են հետևեալ օրը, իսկ թերթիկներով կատարվող ընտրութիւնները նշանակվում են նորից՝, պակաս ընտրող-պատգամաւորներ ընտրելու համար. վերջին դէպքում ընտրված համարվում են համեմատական չափով շատ ձայներ ստացողները։

Ընտրված ընտրող-պատգամաւորների մասին հաղորդվում է համապատասխան նահանգապետներին, որոնք այդպիսիների ցուցակը հրատարակում են պաշտօնական թերթերում։

Բացի մեր յիշած ընտրող-պատգամաւորների երեք կատէգորիաներից, մասնակցում են նաև Դումայի անդամների ընտրութիւններին բանուորներից ընտրված պատգամաւորները հետևեալ քանակութեամբ. Բագուի նահանգից 4, Բաթումի շրջանից 1, Թիֆլիսի նահանգից 2, Կուբանի շրջանից և Սև-ծովեան նահանգից մէկ։

Բանուորներից ընտրվող-պատգամաւորը ընտրվում է հետևեալ ձևով. իւրաքանչիւր գործարան կամ հանքային ձեռնարկութիւն, ուր բանուորների թիւը 50-ից պակաս չէ, ընտրում է մի ներկայացուցիչ, իսկ եթէ հազարից աւել է, իւրաքանչիւր հազարին մի ներկայացուցիչ, այնուհետև այդ ներկայացուցիչները ի մի հաւաքվելով ընտրում են օրէնքով սահմանված թւով ընտրող-պատգամաւոր, նահանգական ժողովում մասնակցելու։ Պէտք է այստեղ աւելացնել, որ վերևում յիշված բանուորները, եթէ իբրև հողատէր կամ քաղաքի ընտրող ունենն ցէնզ, նա իրաւունք չունի օգտվելու այդ ցէնզից, այլ պիտի մասնակցի իբրև բանուոր։

Այս ասածներից պարզ է, թէ որքան աւելի խիստ ֆիլտրից են անցնում բանուորների ընտրութիւնները և որպիսի կրճատումների են ենթարկված նրանց իրաւունքները։

Նախ քան անցնելը Պետական Դումայի անդամ ընտրելու վերջին ինստանցիան, այսինքն նահանգական ժողովը, ուզում ենք այստեղ մի քանի խօսքով պարզել օրէնքով թոյլատրված նախապատրաստական ժողովները։

Համաձայն 76-րդ յօդուածի, ընտրողներին և ընտրող-պատգամաւորներին իրաւունք է տրվում գումարել նախապատրաստական ժողովներ՝ խորհրդակցելու ընտրութեան արժանի կանդիդատների մասին։

Ձայնատուների նախապատրաստական ժողովում կարող են ներկայ գտնվել միմիայն նրանք, որոնք մտած են ընտրողների ցուցակների մէջ այդ շրջանում, իսկ ընտրող-պատգամաւորների նախապատրաստական ժողովում նրանք, որոնք այդ նահանգի պատգամաւոր ընտրողներ են։ Այդպիսի ժողովները պէտք է կայանան փակված շինութիւնների մէջ և կազմակերպողները ամենապակասը 24 ժամ առաջ պէտք է յայտնեն տեղական ոստիկանապետին այս մասին՝ կցելով ժողով կազմակերպողների ցուցակը։

Տեղական իշխանութիւնը նշանակում է իր ստորադրեալներից մէկին՝ ժողովին ներկայ գտնվելու, որի պահանջով հարկ եղած դէպքում ժողովը պէտք է անմիջապէս փակվի։

Նախապատրաստական ժողովները կարող են փակվել ոստիկանութեան միջոցով հետևեալ դէպքերում. 1) երբ ժողովը անկայանալի կերպով շեղվի պարագամունքի առարկաներից. 2) երբ ժողովներում յայտնվեն կարծիքներ բնակիչներին միմեանց դէմ գրգռող. 3) երբ ժողովում կատարվի չը թոյլատրված ժողովարարութիւն. 4) երբ ժողովում անթոյլատրելի անձնաւորութիւններ գտնվեն, որոնք չեն հեռանայ ժողովից և 5) երբ ժողովի խաղաղութիւնը խանգարվի զանազան գրգռող բացագանչութիւններով կամ յայտարարութիւններով, արդարացնելով կամ գովելով չարագործութիւնները, գրգռելով դէպի կառավարութիւնն անհնազանդութիւն կամ տարածելով թռուցիկներ կամ անլեգալ հրատարակութիւններ, որոնց շնորհիւ ժողովը կընդունի հասարակութեան խաղաղութիւնը խանգարող և սպառնացող կերպարանք։

Հետևեալ և վերջին տեսութիւնս նուիրված կը լինի Պետական Դումայի անդամ ընտրող նահանգական ժողովներին։

Շիրին

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

◆ Ցարեցինում բոլոր ձախակողմեան կուսակցութիւնները միացել են, կազմել նախընտրական կոմիտէտ և նկատել պատուիրակացուներին։ Ընտրութիւններին վճռված է հանդէս գալ անկուսակցական առաջադիմականների դրօշակի տակ։

◆ Սեվաստոպոլում իր թեկնածութիւնն է դնում յայտնի հասարակական գործիչ, Պետերբուրգի քաղաքային դումայի ձայնաւոր Զխտակօվը, որի թեկնածութիւնը խոստացել են պաշտպանել ոչ միայն առաջադիմականները, այլև հոկտեմբրեանները։

◆ Ուղղափառ սինօդը բացատրել է, որ եպիսկոպոսները կարող են Պետական Դումայի անդամ ընտրվել սինօդի թոյլտւութեամբ միայն, իսկ քահանաները՝ թեմական իշխանութեան։

◆ Կազանի ազգայնականների կլուբին մի մարդ, որը ուզեցել է անյայտ մնալ, նուիրել է 1000 ր. նախընտրական պայքարի համար։

◆ Պոլտավայի ազգայնականների ընթերցարանի օծման հանդէսին փոխ-նահանգապետ Գոլօլոբօվը նախընտրական ճառ արտասանեց, կոչ անելով ռուս մարդկանց կառավարութեան և նրա ներկայացուցիչների հետ միացեալ ույժերով աշխատելու, որպէսզի Պետ. Դումայի ընտրութիւններին անցնեն արժանաւոր մարդիկ։

◆ Մինչև յուլիսի 22-ը Թիֆլիսի քաղ. վարչութիւնը ընտրողական ցուցակների մէջ մտցրել է ծառայութեան ցէնզով՝ ռուսական կուրիայում՝ 2474 հոգի և ընդհանուր կուրիայում՝ 1880։

◆ Նախկին տարիների նման, քաղաքային վարչութեան մէջ կազմվող ընտրողական ցուցակների կանոնաւորութեանը վերահսկելու համար կը նշանակվի յատուկ պաշտօնեայ։

◆ Բնակարանային տուրք վճարողներից ընտրողական ցուցակի մէջ մինչև այժմ մտել են ռուսական կուրիայում՝ 1015, ընդհանուրում՝ 1830։ Առևտրա-արդիւնաբերական ցէնզով՝ ռուսականում՝ 139, իսկ ընդհանուրում 1018 հոգի։

ՀԱՅԵՐԷՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Կովկասում կան մօտ 500 հայոց ուսումնարաններ, սակայն մեր բոլոր դպրոցներում գործ են ածվում ռուսաց կեանքից վերցված պատկերներ, որովհետև հայկական կեանքից վերցված պատկերները բացակայում են։ Տեսել ենք «Հասկերի» հրատարակած «Գիւղում» պատկերը, որ աջող է, բայց մէկով բան չի դառնայ։

Պատկերներն օժանդակիչ միջոց են ուսման ժամանակ. նրանք կարևոր են մանաւանդ գիտողական ուսման ժամանակ, ուստի անհրաժեշտ է մտածել, որ լրացնենք այդ պակասը, տպագրել տալով հայերէն գունաւոր պատկերներ (և ոչ սև), ինչպէս կան ռուսների մօտ։ Շատ պարզ է, որ հայ մանկան աւելի գրաւիչ են իր հայրենիքի պատկերները, քան թէ հեռաւոր անծանօթ Ռուսաստանի պատկերները։

Գրավաճառներ Գրոսման և Կնէբէլ Մոսկվայում ունեն պատկերների շքեղ գունաւոր հրատարակութիւններ, որոնք շատ էժան են և մատչելի։ Օրինակ «Животныя и растенія всѣхъ странъ» և «Царство животныхъ въ картинкахъ» շքեղ մեծադիր գունաւոր պատկերները մաքուր կտաւի վրա կպցված. հինգ հատն արժէ 8 ր.։ Յեսուի ռուսաց կեանքից վերցված 10 պատկերներ բացատրական գրքոյկներով արժեն 20 ր.։ Սրանք յոյժ կարևոր են գիտողական ուսման ժամանակ։

Կենդանիների, բոյսերի, միջատների, թռչունների, սողունների և այլ անհրաժեշտ պատկերների հետ՝ մեզ հարկաւոր է ունենալ նաև աշխարհագրական հայերէն քարտէզներ։ Վարդանեանը կազմեց հին Հայաստանի քարտէզը, սակայն այս բաւական չէ. հարկաւոր է նաև կազմել կիսագնդերի, աշխարհի հինգ մասերի, Ռուսաստանի, Կովկասի պատկերները, ինչպէս կազմած ունի Իլյին ռուսերէն։ Նոյնպէս և հարկաւոր է ունենալ հայերէն գլոբուս։

Ցանկալի է, որ մեր հայկական ընկերութիւնները—Բարեգործական, Կուլտուրական կամ Հրատարակչական—ձեռնամուխ լինեն հայկական գունաւոր պատկերների հրատարակութեան, որով մեծ ծառայութիւն կը մատուցեն հայոց դպրոցներին։

Անհրաժեշտ է բոլոր կենդանիների, թռչունների, միջատների, սողունների բոյսերի տակը գրել անունները հայերէն, ինչպէս գրած ունեն Գրոսման և Կնէբէլ իրանց հրատարակած պատկերների մէջ։

Ի հարկէ, հարկաւոր են նաև կրօնական պատկերները՝ հին և նոր կտակարանից գունաւոր, օրինակ, ինչպէս կազմել է Սիդորսկին, որի կազմածի 50 հատն արժէ 13 ր., կարդոնի վրա կպցրած։

Ե. Գ. Գրիգորեան

Ցարսկիէ-Կոլօդցի։

ԿԵԱՆՔԻ ՑԱՒԵՐԻՑ

XII

Պրօֆէսիա

«Մի ձեռով երկու ձմերուկ վերցնել չի լինի»—ասել է հայկական առածը շատ վաղուց և իսկապէս որ անկարելի է. մէկն ու մէկը անշուշտ պիտի վայր ընկնի և փշուր-փշուր լինի. գուցէ և երկուսն էլ վայր ընկնեն, եթէ ձեռքը մի քիչ թոյլ պահված լինի։

Այդպէս է թելադրել կեանքը, այդպէս եղել է և այդպէս էլ պիտի լինի. իսկ մենք ընդհակառակը ճիգ ենք անում այդ բնական ու հիմնական օրէնքին հակառակ ընթանալու։

Բայց ի զուր։

Իւրաքանչիւր մարդ մի տիրոջ կարող է ծառայել. իւրաքանչիւր անհատ, որքան էլ ուժեղ լինի, որքան էլ մտաւորի կողմից առաջնակարգ դիրք գրաւելու լինի, էլի միայն և միայն նա ընդունակ կը լինի ծառայել մէկին, վարել մի գործ, այսինքն կը լինի իր յատուկ պրօֆէսիայի արտայայտիչը։

Մի անհատը իր յատուկ պրօֆէսիայից դուրս ինչ գործ անելու լինի, չէ կարող կատարել այն բարեխղճօրէն, այնպէս, ինչպէս հարկն է, ինչպէս թելադրում է նրան իր խիղճը, միտքը։ Նա եթէ աշխատելու լինի, որ իր այդ սահմանած գործն էլ բարեխղճօրէն կատարէ, ստիպված պիտի լինի թուլացնելու իր պրօֆէսիան, որից յետոյ ոչ մէկի արտայայտիչ լինել չէ կարող այդպիսին, որովհետև երկուսն էլ հաւասարապէս կը թուլանան և այդպիսով ոչ մէկը, ոչ էլ միւսը բանի պէտք չի լինի։

Կը փշրվեն երկու ձմերուկներն էլ։

Մեր հասարակական գործիչները, գրողները, ուսուցիչները, բոլորն էլ ճիշդ այդ դրութեան մէջ են, իւրաքանչիւրը երեք-չորս գործ է անում։

Տեսնում էք՝ գրողը միաժամանակ ուսուցիչ է, ուսուցիչը՝ թղթակից, կամ ուրիշ գործեր են անում և այլն։

Իսկ այս ամենը ունեն իրանց օգտաւէտ հետևանքներ. երբեք։

Գրողը միաժամանակ ուսուցիչ է. այժմ տեսէք նրա դրութիւնը։

Առաւօտեան ժամը 8-ից նա դպրոց պիտի գնայ մինչև 2-ը, այնուհետև էլ եթէ ազատ ժամեր ունենայ, դեռ լաւ է. բայց կան նաև ուսուցչութեան այլ պարտականութիւններ, որոնք ամբողջապէս կլանելով նրա ժամանակը, էլ բոպէներ անգամ չեն թողնում զբաղվելու իր գրական գործով։

Բայց հարցը դրանում չէ. եթէ այդպէս լինի, կասենք, որ նա ամբողջապէս կլանված է ուսուցչական պրօֆէսիայով, օրինակելի ուսուցիչ է և այլն և այլն. բայց ճապէս՝ երբեք այդպէս լինել չէ կարող։

Ես համոզված եմ, և կարծում եմ՝ չեն ժխտի, որ «գրող ուսուցիչը» առաւօտ դըպրոց է գնում դժկամակութեամբ, պարապում է՝ ինչպէս ասում են՝ զոռով, որովհետև «ստիպված է», հակառակ դէպքում լայն ճանապարհը իր առաջն է, և շատ հասկանալի է թէ ինչու. որովհետև մուզան կանչում է նրան, մտածումները, նոր ծրագիրները, զանազան թեմաները, պատկերները ձգում են նրան գրասեղանի առաջ, բայց նա պիտի գնայ։

Ու գնում մի կերպ «դաս» է անում դասերն ու վերադառնում տուն, նստում գրասեղանի առաջ, բայց այս անգամ էլ մուզան չը կայ։ Եւ այդպէս համարեա ամեն օր։

Իսկ այս բոլորին հետևում է թուլացում, հիասթափութիւն և, որ ցաւալին է, մտաւոր, գրական հրապարակի անապատացումն։

Այդպէս ուրեմն՝ այդ անհատի մէջ հաւասարաչափ թուլացան երկու պրօֆէսիաներն էլ. նա գրելու ժամանակ չէ գտնում, իսկ ուսուցչութիւն է անում դժկամակութեամբ, ռադ անելով կամ ուրիշ խօսքով փողի համար։

Բայց արդեօք նա կարող էր զբաղվել միայն գրելով. երբեք. որովհետև թէ որքան են մեր գրողները իրանց վաստակով ապրում, դրա մասին խօսելու կարիք անգամ չը կայ, այնքան պարզ է, նշանակում է՝ նա ստիպված է միաժամանակ ուսուցիչ լինելու, որ ապրի։

Իսկ արդեօք ժամանակը չի եկել այս բանի մասին խօսելու վերջակէտը դնելու, չէ որ մենք մեր իսկ ձեռքերով մեր տունն ենք քանդում։

Բայց մենք կուլտուրական ազգ ենք կոչվում, ունենք մեր ազգային գործիչները. ինչ կասեն արդեօք դրանք, մեր կուլտուրականութեան արտայայտիչները, մեր փըրկիչները։

Ժամանակը չէ, որ դրանք իրանց փափուկ բազմոցներում, շքեղ սենեակներում արտասանած ճառերը, կոչերը, նոյնիսկ հարայհրոցները, շատ չէ, մի քառորդաչափ իրականացնեն, ցոյց տան, որ իսկապէս իրանց գործ են կատարում։

Հազարաւոր ճառերից լաւն այն չէ, որ այդ ամենը գոնէ հիւլէաչափ իրականօրէն արվէն։

Մենք սովոր ենք միմեանց ետևից գեղեցիկ, ինչպէս ասում են, ճոճուն բառեր շարելու, բայց եթէ խորքը թափանցելու լինենք, կը տեսնենք, որ այնտեղ դատարկ է։

Եթէ մենք կամենում ենք բարելաւել մեր հասարակական և մտաւոր կեանքը, եթէ մենք կամենում ենք լինել ճապէս կուլտուրական ազգ, հարկաւոր է, որ այդ ասպարէզում գործող բոլոր անձինք էլ լինեն պրօֆէսիօնալներ, մի ձեռքով միայն մի ձմերուկ բռնեն. և ահա այդ դէպքում մենք իրաւացիօրէն կարող ենք ասել, որ այո, մենք կուլտուրական ենք, մենք ունենք գրողներ, ունենք ուսուցիչներ և այլն։

Պէտք է զատել պրօֆէսիաները, գրողը պիտի լինի զուտ գրող, ուսուցիչը՝ ուսուցիչ և այլն։

Պրօֆէսիա։

Եւ այդ էլ կը լինի, այդպէս կարող է լինել միայն այն դէպքում, երբ իւրաքանչիւր պրօֆէսիա կը կերակրէ իր մշակին։

Գրականութիւնը պիտի կերակրէ գրողին, ուսուցչութիւնը՝ ուսուցչին, մամուլը՝ հրապարակախօսին։

Պէտք է աշխատենք որ այդպէս լինի իրականօրէն, այդ պիտի ի նկատի առնեն մեր փրկիչները, ազգային առաջնորդները։

Այդ ենք խնդրում դրանցից։

Այդ է պահանջը, երբ իրաւունք ենք համարում մեզ կուլտուրական անուանելու։

Իրական գործ։

Պրօֆէսիա։

Ահա արդար պահանջը։

Արշալոյս Տէր-Ցոփանեան

Հանդամէջ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ առաւօտեան գնացքով Անիից Թիֆլիս եկաւ պրօֆ. Ն. Մառը։

◆ Ներկայումս Թիֆլիսումն է գտնվում և շուտով Կ. Պոլիս կը մեկնի Վանի վարժապետանոցի տնօրէն Յովսէփ Գույումճեանը։

◆ Արձակուրդ է ստացել քաղաքային վարչութեան անդամ Գ. Դ. Ժուրուլի։ Երկրորդ ելևմուտի բաժնի և հաշւապահական մասի վերահսկողութիւնը ստանձնել է վարչութեան անդամ Մ. Ն. Աթաբէգեանը։

◆ Առևտրա-արդիւնաբերական հիմնարկութիւնների և գրասենեակների ծառայողների հանգստութեան մասին հրատարակված պարտադիր որոշումները վերաքննելու հարցը նորից կանգնել է քաղաքային վարչութեան առաջ։ Հարկաւոր է նոր խառն մասնաժողով կազմել քաղաքային վարչութեան, տէրերի և աշխատաւորների ներկայացուցիչներից։ Այդ մասնաժողովի ընտրութիւնը յետաձգվել է աշնանը։

◆ Մսի թանգանալու պատճառը Թիֆլիսում համարելով մսագործ-մակլերներին, նորերս առաջարկված էր արգելել նրանց գործունէութիւնը և այդ պահանջը խախտողներին ենթարկել պատասխանատուութեան։ Այդ կարգադրութեան առիթով անասնավաճառանոցի մակլերները, թւով 17 հոգի, հաւաքական խնդիրքով դիմել են Թիֆլիսի նահանգապետին, բացատրելով որ իրանց գործունէութիւնը ոչ թէ արուեստական կերպով թանգացնում է գները, այլ, ընդհակառակը, էժանացնում է, ուստի խնդրում են թոյլատրել իրանց գործունէութիւնը։ Միաժամանակ նրանք խնդրում են թոյլ տալ իրանց հիմնելու մակլերների համայնք ընտրողական աւագով։

◆ Քաղաքային վարչութեան մէջ հարց է յարուցված պարտաւորութիւն դնել քաղաքա-առևտրա-տնտեսական ագէնտներից մէկի վրա՝ հաւաքելու Թիֆլիսի շուկաներում վաճառվող բոլոր մթերքների գների վերաբերմամբ ստոյգ տեղեկութիւններ՝ վարչութեանը ներկայացնելու համար։

◆ Միջնորդութիւն է յարուցված պօստային տրակտ բանալու Զանգեզուրի գաւառի Գորիս գիւղի և Ղաժարի պղնձահանքերի միջև։

◆ Միջնորդութիւն է յարուցված պօստային տրակտ բանալու Նուխի քաղաքի և Աղդաշի միջև Կուտկաշէն գիւղի վրայով։

◆ Թիֆլիսի դատաստանական պալատի սեսսիան յուլիսի 22-ին ուղևորվեց Գանձակ, Բագու, Պետրօվսկ, Գրօզնի և Պետիգորսկ։ Թիֆլիս կը վերադառնայ օգոստոսի 11-ին։

◆ Քաղաքային դումայի Ծալկա գնալը՝ տեղական աղբիւրները դիտելու նպատակով՝ վերջնականապէս նշանակված է յուլիսի 28-ին։ Քաղաքային վարչութիւնը այդ առիթով դիմել է նահանգապետին՝ խնդրելով կարգադրել գաւառական ադմինիստրացիային՝ հարկաւոր աջակցութիւն ցոյց տալու ձայնաւորներին։

◆ Թիֆլիսի քաղաք. վարչութեան մըթերային բաժանմունքում կազմակերպչական աշխատանքները շուտով կաւարտվեն։ Այդ բաժնի վարիչ Ն. Մ. Կարա-Մուրզայի առաջարկութեամբ կազմվելու է առանձին տնտեսական կոմիտէտ, դումայի յանձնաժողովների նախագահների և զանազան բաժանմունքների վարիչների մասնակցութեամբ, որը կօլլեգիալ կերպով կը լուծէ քաղաքային հաստատութիւնների համար պահանջվող իրերի ու մթերքների հարցը և ապա կը ներկայացնի վարչութեանը ի հաստատութիւն։ Կոմիտէտի աշխատանքները կը սկսվեն օգոստոսից։

◆ Յուլիսի 21-ին, գիշերվ. ժ. 10-ին, Կօջօր տանող խճուղու վրա, Թիֆլիսից 3 վերստ հեռու, անձրևի ժամանակ զառիվայրից ցած է ընկել ֆրանսիական անօնիմ ընկերութեան մարդատար աւտոմօբիլը, որի վրա, բացի շօֆֆէր Գէորգ Բուդաղեանից, նստած են եղել նաև բանուորներ Վալէրեան Տարնով և Կարլ Գոնեման և մի երրորդ անձնաւորութիւն։ Նրանք բոլորն էլ աւտոմօբիլի հետ միասին գլորվել են ցած և ջարդուածքներ ստացել։ Աւտոմօբիլն ընկել է ձորը 5 սաժէն բարձրութիւնից։

◆ Յուլիսի 21-ին Մուշտայիդի ձախ ափից գողացել են Ալէքսանդր Թվալէէվի ազատարար մակոյկը իր բոլոր պարագաներով։

◆ Բօրչալուի գաւառում, Մանգլիսի և Պրիւտի միջև, Ալգեթ գետի մօտ 5 զինված թուրքեր կողոպտել է Թիֆլիսից գնացող 4 հոգու, խլելով նրանց ձիերն ու իրեղէնները։ Կողոպտիչներից երկուսը կալանաւորված են, տարած ձիերից երկուսը, գողացված իրերի մի մասը և երեք հրացաններ ոստիկանութիւնը գտել է արդէն։

◆ Քութայիսից հեռագրում են, որ վրաց համբաւաւոր բանաստեղծ Ակակի Ծերեթելին պատուելու համար Րաչինի գաւառի բնակիչները հրաւիրել են նրան Օնի։ Ծերեթելին գնացել է այնտեղ։

◆ Երևանի Նահանգի տնայնագործական արհեստանոցների պահպանութեան համար, կովկասեան տնայնագործական կոմիտէտը, համաձայն Երևանի նահանգապետի միջնորդութեան, յատկացրել է լրացուցիչ գումար 600 րուբլի, որը, զեմստվային նախահաշիւը հաստատվելուց յետոյ, կը վերադարձվի։

◆ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն դիմել է Բագուի քաղաքային վարչութեանը մի գրութեամբ, ուր յայտնելով, որ նպատակ ունենալով Կովկասի մի քանի քաղաքներում, ի թիւս որոց նաև Բագւում, ուսուցչական սեմինարիաներ բանալ՝ տարրական դպրոցների համար ուսուցիչ-ուսուցչուհիներ պատրաստելու մտադրութեամբ, անհրաժեշտ է համարում, որպէսզի Բագու քաղաքը սեմինարիայի շէնքի և գիւղատնտեսական կուլտուրայի համար բաւականաչափ հող յատկացնի՝ մօտ 8 դեսեատին, նաև որոշ մասնակցութիւն ունենայ թէ շէնքի կառուցման և թէ դպրոցի կարևորութեան ծախքերին։ Որպէսզի շուտով իրագործվի սեմինարիայի բացման խնդիրը և լուսաւորութեան մինիստրը կարողանայ առաջիկայ տարվայ բիւջէի մէջ մտցնել հարկաւոր գումարը ժամանակին, հոգաբարձուն խնդրում է շուտով պատասխանել իր գրութեան մէջ յիշված հարցերին։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Յուլիսի 20-ին, առաւօտեան ժամը 10-ին «Փետրվարի 19-ի» փողոցի վրա ապրող Դուշէթի գաւառի Մցխէթ գիւղի բնակիչ Գրիգոր Մովսիսեան Խուբերովը, 46 տարեկան, Տրոյիցկայա փողոցով անցնելիս իրան վատ զգաց յանկարծ։ Շուտափոյթ օգնութեան կառքով նրան Միքայէլեան հիւանդանոց տանելիս՝ ճանապարհին մեռաւ։

◆ Սիղօնիէվսկայա փողոցի վրա ապրող Թիֆլիսեցի Կարապետ Ալէքսէևիչ Մանուչարեանը յայտնել է ոստիկանութեանը, որ յուլիսի 16-ի գիշերը Մանթաշեանի այգու մօտից, Թիֆլիսի գաւառի շրջանում, գողացել են իրան պատկանող նախիրի հօտից 3 եզ և մի կով 160 րուբլու արժողութեամբ, որոնց նա գտել է Պատարձէուլի գիւղի բնակիչ Սիկօ Մարէբօվիչ Ջուքկաշվիլիի մօտ։ Եզներն ու կովը վերադարձված են տիրոջը, իսկ յանցաւորները կալանաւորված։

◆ Անտօնիէվսկայա փողոցում № 12 տանը իր բնակարանի մէջ յուլիսի 22-ի երեկոյեան ժամը 7-ին յանկարծամահ եղաւ Մուխրանի գիւղի բնակիչ բանւոր Գէօրգի Շիօյէվիչ Ջուգաշվիլին, 38 տարեկան։ Դիակը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոց։

◆ Յուլիսի 21-ին շուրջկալի ժամանակ կալանաւորված են Թիֆլիսի 1-ին քաղաքամասում՝ 17 հոգի, 3-րդում՝ 17, 8-րդում՝ 20, 9-րդում՝ 31, 4-րդում՝ 13 և 11-րդում՝ 13 անցագիր չունեցողներ և մուրացկաններ։ Յուլիսի 22-ին կալանաւորված են մուրացկաններ 7-րդ քաղաքամասում 5 հոգի և 9-րդում՝ 3։ Նոյն օրը շուրջկալի ժամանակ կալանաւորված են՝ 7-րդ քաղաքամասում՝ 18 և 9-րդում՝ 24 հոգի անցագիր չունեցողներ։

◆ Թելաւ քաղաքի բնակիչ Արտէմ Աբութիւնովիչ Օգանէզովը մայիսի 22-ին յայտնել է խուզարկու ոստիկանութեան բաժանմունքի պետին, որ մայիսի 11-ին, առևտրական գործերով Թիֆլիսում եղած միջոցին, իր մի ծանօթ Ծղալօբ Դաւիդովիչ Խալիպովի հետ միասին մտաւ Թելաւեցի Գրիգոր Ելագովի գինու պահեստը՝ Միքայէլեան փողոցի վրա № 63 տանը, ուր Ելագովը և Խալիպովը կողոպտեցին նրան՝ խլելով 3 ռուբլիկատ երկաթուղով Բագու ուղարկած 5 տակառ գինու և բացի դրանից սպառնալիքի տակ ստիպեցին իրան ստորագրելու 100 րուբլու պարտաթուղթ։ Գանգատաւորի ասածների ճշմարտութիւնը հաստատված է և գործը յանձնված դատաստանական իշխանութեան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 20 յուլիսի

Հիւսիսային Ամերիկայի Կալիֆօրնիա նահանգի Ֆրէզնօ քաղաքից՝ պ. Կարապետ Մ. Նշկեանից ստացայ ի յարգանս յիշատակի Գաբրիէլ Սունդուկեանցի 50 ր. 14 կոպէկ, խնդրանօք՝ գործադրել այն ըստ իմ բարեհայեցողութեան։

Ըստ այսմ ուղարկելով յարգելի խմբագրութեանդ յիշեալ 50 ր. 14 կ.-ը, խնդրում եմ յատկացնել «Պէպօյի» արձանին, որ ծրագրել է հայոց մեծ ծերունին իր կտակի մէջ։ Բժշկապետ Բ. Նաւասարդեան

—

Նոր-Բայազէտ, 17 յուլիսի

Որպէս լրացումն հոգաբարձութեանս տրուած պատասխանի («Մշակ» № 150) Տեղացուն, կարևոր ենք համարում աւելացնել հետևեալը։

Մեր պատասխան-նամակի մէջ մոռացմամբ չէինք յիշել «Գուտտենբերգ» գրախանութի պարտքը 225 ր., որը մնացել է դարձեալ նախկին հոգաբարձութիւնից և որի վճարումը մեր բարոյական պարտքն է, սակայն մեզանից անկախ պատճառով՝ չը կարողացանք անցեալ ուսումն. տարին լրացնել։

Նախագահ հոգաբարձութեան՝
Հայրապետ Խաչատրեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ «Ран. Утро» լրագրին հաղորդում են Սօֆիայից, որ Բօլգարիայի և Աւստրիայի միջև գաղտնի համաձայնութիւն է կայացել, որի հիման վրա Աւստրիան պաշտպանելու է Բօլգարիայի շահերը Արևելեան Մակեդօնիայում և Օդրինի վիլայէթում, իսկ բօլգարական կառավարութիւնը ճանաչում է Աւստրիայի իրաւունքները Արևմտեան Մակեդօնիայում և Ալբանիայում։ Եթէ վերջինս գրաւի վիլայէթներից մէկն ու մէկը, Բօլգարիան իր զօրաբանակը իսկոյն կուղարկի թիւրքական և սերբիական սահմանագլուխը։ Եթէ պատերազմ ծագի Աւստրիայի և Ռուսաստանի միջև, Բօլգարիան պիտի մնայ չէզոք և փակի իր սևծովեան նաւահանգիստները ռուսաց ռազմանաւերի առաջ։ Դրա փոխարէն Աւստրիան խոստանում է թոյլ չը տալ որ Ռուսաստանը գրաւի Թիւրքիայի այն նահանգները, որոնք յիշեալ համաձայնութեամբ վերապահվում են Բօլգարիային, և պարտաւորվում է՝ համոզել իր բոլոր բանկերին անսահմանափակ կրեդիտ բաց թողնել բօլգարական կառավարութեանը, հոգ տանել Բօլգարիայի տնտեսական զարգացման մասին։ Եթէ Թիւրքիան պատերազմ յայտնէ Բօլգարիային, Աւստրիան իսկոյն կը գրաւէ Հին-Սերբիան, Ալբանիան, Արևմտեան Մակեդօնեան և իր զօրաբանակը կը միացնի բօլգարականի հետ։ Ի նկատի առնելով Թիւրքիայի խառնակ վիճակը և անկման հաւանականութիւնը, այդ համաձայնութիւնը նախատեսում է նաև հիւանդ մարդու ժառանգութեան խնդիրը իրանց միաբան գործակցութեամբ։ Աւստրիան կը վերցնի այդ դէպքում Հին-Սերբիան, Նօվօ-Բազարի սանջակը և Արևմտեան Մակէդօնիան Սալօնիկով միասին, իսկ Բօլգարիան Մակէդօնիայի մնացեալ մասը՝ Օդրինի վիլայէթը և Դէդէ-Աղաջը։

◆ Կ. Պօլսից հաղորդում են, որ Թիւրք կառավարութիւնը վճռեց համարել ներկայ պալատը շարունակութիւն իր նախորդի, որի լիազօրութիւնները լրանում են առաջիկայ օգոստոսի մէկին։ Լուրերին նայելով, ալբանացիների պահանջը պալատը արձակելու մասին ընդունված է այն պայմանով միայն, որ նրանք հրաժարվեն Ալբանիայի համար աւտօնօմիա պահանջելուց։ Նազիմ-բէյը և երկու դաշնակցականներ ներկայանալով գերմանական դեսպանին, խնդրել են աջակցութիւն ցոյց տալ «Մ. և Ա.» կոմիտէտին։ Դեսպանը խոստացել է։ Խօսում են, որ պարլամենտի կողմից նոր կաբինետին վստահութեան քուէ տալը հետևանք է Թէվֆիկ փաշայի Լօնդօնից ստացած հեռագրի, որտեղ ասված էր, թէ Գրէյը յայտնել է, որ իշխանութիւնը երիտասարդ-թիւրքերի ձեռքն անցնելու դէպքում Անգլիան Թիւրքիայի վրա կը նայի իբրև անարխիայի մէջ տառապող մի երկրի և հարց կը բարձրացնի նրա վրա խնամակալութիւն հաստատելու մասին։

◆ Սօֆիայից հաղորդում են, որ մակեդօնացիների պարագլուխ Սանդանսկին, յուսախաբված լինելով Թիւրքերից, իր մարդկանցով բարձրացել է լեռները։ Պատրաստութիւններ են տեսնվում ապստամբութիւն սկսելու համար։

◆ Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Պուանկարէի Ռուսաստան գալը շաղկապում են այդ երկու պետութիւնների միջև կայացած ծովային համաձայնութիւնը ստորագրելու խնդրի հետ։ Այդ համաձայնութեամբ ռուսական նաւատորմը պարտաւորութիւն է ստանում պահելու գերմանական նաւատորմի մի մասը Բալտիական ծովում, արգելք լինելով վերջինիս գործելու անգլիական նաւատորմի դէմ։ Այդպիսի ակտիվ դեր էլ յատկացվում է ռուսաց նաւատորմին Միջերկրական ծովի վրա։

◆ Չինական պալատը և Իւանշիկայը հեռագրեր են ստանում գաւառներից, որտեղ խօսվում է Եապօնիայի և Ռուսաստանի ագրեսիվ վերաբերմունքի մասին։ Կառավարութիւնից պահանջում են վճռական միջոցներ ձեռք առնել։

◆ Բեռլինից հաղորդում են «Р. Вѣд.» լրագրին, որ դաշնակից կառավարութիւնները պայմանաւորվել են աւելի վճռական կռիւ մղելու սօցիալ-դեմօկրատների դէմ։ Պրուսիայի օրինակին հետևելով, բաւարական և բադէնեան կառավարութիւններն էլ վճռել են հրաժարվել հաստատելու մունիցիպալիտէտի պաշտօնների համար ընտրված սօցիալիստներին։

◆ Մօտ օրերս Պետերբուրգ է գալու Պարիզի ռուսաց դեսպան Իզվօլսկին մասնակցելու արտաքին քաղաքականութեան վերաբերեալ կարևոր հարցերի քննութեանը։

◆ Ռուսաց սօցիալ-դեմօկրատները Պարիզում նորերս վճռել են մասնակցել Պետական Դումայի ընտրութիւններին և բլոկ կազմել կադէտների հետ, միայն թէ ոչ բանւորական կուրիաներում։ Մեծամասնականները դէմ են կադէտների հետ բլոկ կազմելուն։

◆ Եկատերինօսլաւի նահանգից հրէայ ընտանիքներին արտաքսելու առիթով հեռագիրներ են ուղարկված մինիստրների խորհրդի նախագահին և ներքին գործերի մինիստրին, խնդրելով մի առ ժամանակ դադարեցնել արտաքսումը, մինչև որ հրէական պատգամաւորութիւնը Պետերբուրգ գայ բացատրութիւն ներկայացնելու։

◆ Խերսօնից հեռագրում են, որ գերմանական գաղութների պատգամաւորութիւնը միջնորդել է, որպէս զի նահանգապետի շրջաբերականով արտաքսված հրէայ ընտանիքներին թոյլատրվի մնալ իրանց բնակավայրերում։ Խոստացել են թողնել նրանց միայն, որոնք բնակութիւն են հաստատել այնտեղ մինչև 1888 թիւը։

◆ Ռօմանօֆների տան 300-ամեակի առիթով, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը պատրաստվում է միջնորդութիւն զարթեցնել, որպէս զի իրաւունք տրվի իրան իւրաքանչիւր տարվայ իր նախահաշւի մէջ մտցնելու որոշ գումարներ, նախ՝ մի 3000 յօբելեանական թոշակաւորներ պահելու համար, որոնցից 500-ը Բարձրագոյն դպրոցներում, 1000-ը միջնակարգ և 1500-ը ստորին, երկրորդ՝ 100,000 րուբլի ժողովրդական լուսաւորութեան անդաստանի վրա աշխատողների համար կենսաթոշակային ֆօնդ հիմնելու։ Բացի դրանից տասը տարին մի անգամ էլ յատկացնել 100,000 րուբլի Ռօմանօֆների հարստութեան շրջանի ռուսաց պատմութեան վերաբերեալ լաւագոյն աշխատութիւն կազմողներին պարգևատրելու նպատակով ֆօնդ հիմնելու։

◆ Երկրագործութեան մինիստր Կրիվօշէինը մինիստրների խորհրդին ներկայացրել է Ռուսաստանի գիւղատնտեսական դպրոցները բարեկարգելու համար մի նախագիծ։

◆ Թաղիևի յայտնի գործի քննութիւնը Թիֆլիսի դատաստանական պալատում նշանակված է առաջիկայ օգոստոս ամսի երկրորդ կէսին։ Թաղիևին, «Н. Вр.»-ի ասելով, պաշտպանելու է երդ.-հաւատարմատար Տատարինօվը։

◆ Վճռված է երկաթուղային պլացկարտերի արժէքը նուազեցնել։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

21 յուլիսի

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՎՍԿ (Եկատերինօսլաւի նահանգ)։ Ծանր կերպով վիրաւորված են խոշոր գործարանատէր գերմանահպատակ Լագօվսկին և իր որդին։ Մահափորձ կատարողը, նախկին արհեստաւոր գերմանացի, կալանաւորվելու միջոցին՝ սպանվել է պահակների ձեռքով։

ԼՕՆԴՕՆ։ Օդագնաց Կեմպբէլը թռիչքի ժամանակ Բրուկլենդի մօտ վայր ընկաւ և մեռաւ։

ԲԵՌԼԻՆ։ «Գանզա» նորակառոյց ցեպպելին օդանաւը սկսելով իր թռիչքը Ֆրիդրիխսհաֆէնից անընդհատ կերպով անցաւ Գերմանիան հարաւից դէպի հիւսիս՝ Վիւրցբուրգի, Գետտինգէնի, Դետմօլդի, Վեստֆալիայի վրայով և ցած իջաւ Համբուրգում։ «Գանզան» աշխարհիս ամենաարագաթռիչ դիրիժաբլն է, որ մի ժամում թռչում է 80 կիլոմետր տարածութիւն։

ՍԱՄԱՐԱ։ Շուկայում երևացին նոր բերքի հացահատիկներ։ Գարնանացան ցորենի բերքը հասնում է 75—100 պուդի մի դեսեատինից։

ՈՒՖԱ։ Նահանգում հացահատիկների բերքը միջակից բարձր է։ Խոտը՝ առատ է։

ՕՐԵՆԲՈՒՐԳ։ Հացի բերքը միջակից բարձր է։

22 յուլիսի

ՊԵԿԻՆ։ Ռուսաց դեսպանը ստացել է Վայցզեաօբուից պատասխան, որ ռուսահպատակներին ծեծելու մէջ մեղաւոր Խէտանի և Կոբբի գաւառապետները արձակված են պաշտօնից և դատաստանական պատասխանատուութեան ենթարկված։ Սկզբունքով չինական կառավարութիւնը համաձայն է Ռուսաստանի պահանջները կատարելու։

ՏՕԲՕԼՍԿ։ Ակնաբոյժ խումբը կին բժիշկ Լէվիցկայայի ղեկավարութեամբ մի ամսվայ ընթացքում Տարում ընդունել է 1219 երթևեկ հիւանդներ, 212 պառկողներ, և վերահատութեան է ենթարկել 1208 հոգու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նորին Կայսերական Մեծութեան Թագուհու Կայսրուհու անուան 25,000 ր. մրցանակը ձի սրշաւի ժամանակ տարել են հետևեալ երկու ձիերը. առաջին մրցանակը վերցրել է Մանթաշեվի Գրիմզան, երկրորդ՝ Լազարևների Դարզօն։

Նորին Կայսերական Մեծութեան Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդօրօվնայի անուանակոչութեան օրը մայրաքաղաքը զարդարված էր դրօշակներով։ Եկեղեցիներում հանդիսաւոր մաղթանքներ են կատարվել։ Հանդիսաւոր մաղթանքներ են կատարվել նաև Կայսրութեան զանազան քաղաքներում։

ԼԻՍԱԲՕՆ։ Անգլիական դեսպանի պահանջով կին թղթակից Օրանը ազատված է։ Նա հարցաքննութեան է ենթարկվում դեսպանի ներկայութեամբ։

ԿԱԶԱՆ Քաղաքի ընտրողական ցուցակների մէջ առաջին կուրիայում մտել են 1744 հոգի, երկրորդում՝ 7429։ Երրորդ Դումայի ընտրութիւնների հետ համեմատելով այս անգամ աւելացրել է՝ առաջին կուրիայում՝ 820, երկրորդում՝ 703։ Ընտրողների աւելանալու պատճառը քաղաքային գոյքերի գնահատութիւնը բարձրացնելն են համարում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Пиксафонъ
Уходъ за волосами дегтемъ
Цѣна флакона, хватающаго на нѣсколько мѣсяцевъ, 1 р. 50 коп.
На научномъ основаніи действительно лучшій способъ для укрѣпленія кожи головы и волосъ.
Пиксафонъ
(275202/275208)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
Ա Ռ Ա Ւ Օ Տ Ն Ե Ր Ը
«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 Ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՄԱԼԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին նևեարդային։
Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Ց. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ — 1—2 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—69

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ հայոց եկեղ.-ծխակ. երկսեռ. երկդասեան դպրոցի համար հարկաւոր է
ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ
16 դաս, հոգաբարձութեան քարտուղարութիւն, 750 ր. ռոճիկ։ Դիմել՝ Ахалкалаки (Тифл. губ.). Попечительству Арм церков.-приходской школы.
(օ.մ.) 521. 3—3

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.
ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.
Ամառային երթևեկութիւն
ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ
Մեկնում են Բաթումից
I Պօստային-մարդատար շոգենաւեր.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով
Հինգշաբթի » 1 » »
Շաբաթ » 12 » ուղղակի
II Մարդատար շոգենաւեր.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » »
III Մարդատար-ապրանքակիր շոգենաւեր.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » »
Ժամերը Պետերբուրգի են։
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՊՕՍՏԱՅԻՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի, բիօլթեազայի, Մակեդօնիայի, Սերբիայի, Անատօլիայի, Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։
ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ, Րիգա, Լիբավա և Րէվել։
Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում Վելիամինօվսկայա փողոց, № 18.
Հեռախօս № 11.
Ընդունվում են եւ ապահովացվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով։
Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց
(շ.) 0—57

ՎԱՀԱՆ ՄԱԼԷԶԵԱՆ
(Թիւրքահայ բանաստեղծ)
•••ԿԵՐՈՆՆԵՐ•••
Ներկայ աշխատութիւնը, որ կը պարունակէ իր մէջ 129 ոտանաւոր, բաժնուած է հինգ մասի։
I մաս—Հին հնչեակներ
II » —Հոգիի ժեսթեր
III » —Իրիկնամուտին
IV » —Ծամբուն եզերքը
V » —Տառապանքին յաղթանակը
Այս հատորը, որու ծաւալն է 307 էջ, տպուած է լաւագոյն թղթի վրայ և արժէ 1 ր. (ճանապարհածախսով 1 ր. 10 կ.)։
ՍԱԿԱՒԱԹԻՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ
Կարելի է գնել «Մ Շ Ա Կ Ի» խմբագրատանը
(օ. մ.) 517. 5—4

Ստաւրօպօլի 8-դաս. իգական ԳԻՄ. ՆԱԶԻԱՆ ԱԻԱՐՏԱԾ
Մ Ի Հ Ա Յ Ո Ւ Հ Ի
ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՒՆԵՆԱԼ
Ուսուցչուհու պաշտօն
հայոց դպրոցներում (գերադասում է քաղաքայինը)։ Կարող է աւանդել թւաբանութիւն, ռուսաց լեզու, ձեռագործ, ռուսաց պատմութիւն, աշխարհագրութիւն թէ Ռուսաստանի և թէ ընդհանուր։ Հասցէն՝ Ставрополь губ., 2-ая Станичная, № 36. Астгикъ Георгіевнѣ Агамянцъ.
(ա.օ.) 522. 5—5

ՕԴԵՍՍԱՅԻ
հայոց ծխակ. միդասեան դպրոցի համար
Հ Ա Ր Կ Ա Ւ Ո Ր Է
Մի ձեռնհաս ուսուցիչ
հայոց լեզուի, գրագիտութեան և երգեցողութեան համար, շաբաթական 17—18 դասով. ռոճիկը 30 ր. ամսական, բնակարան միայն մի սենեակ և վառելիք։ Ցանկացողները պէտք է ուղարկեն ուսման և բարեկարգ ուսուցչական վկայականները կամ նրանց պատճէնները։ Դիմել անյապաղ Одесса, свящ. О. Чубарьяну. Екатерининская 69.
(ա.օ.) 539. 5—1

ՆԵՐՍԻՍԵԱՆԱՒԱՐՏ ուսուցիչ 6 տարվայ փորձ. (աւարտած նաև քաղ. դպրոցը) և
ԳԻՄՆԱԶԻԱՒԱՐՏ ուսուցչուհի 3 տարվ. փորձ. (անցել է տեսակ. մանկավ.)
ԱՄՈՒՍԻՆՆԵՐ
ցանկանում են պաշտօնավարել Թիֆլիսի կամ գաւառական ծխ. դպրոցներից մէկում։
Երկուսն էլ հմուտ են պետական լեզուին։
Ուսուցիչը իբրև փորձված դիրեկտոր կարող է քառաձայն խումբ կազմել եկեղեցու համերգների համար։
Հրաւէր ընդունելու դէպքում դօկումենտները անյապաղ կուղարկվեն պօստով։
Պայմանների մասին դիմել՝ Тифлисъ, Бебутовская, 44, кв. 1. Учителю Георгію Меликянцу. (ու.ե.) 523. 6—2

ՄՕՍԿՎԱՅԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԻՆ ԿԻՑ
Երկրորդ տ. „ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ“ Երկրորդ տ.
Դասընթացքները եռամեայ են. դասաւանդման եղանակը տարկյական է։ Ուսման վարձն է 100 ր.։ Աւանդվում են հետևեալ առարկաները. 1) Հայկական ձայնագրութիւն, 2) Համեմատական հարմօնիա, 3) Եկեղեցական երգեցողութիւն, 4) Եկեղեցական երգեցողութեան պատմութիւն, 5) Եկեղեցական ծիսակատարութիւն, 6) Տարրական երաժշտական թէօրիա, 7) Հարմօնիա, 8) Սօլֆեջիօ, 9) Էնցիկլօպեդիա, 10) Երաժշտական պատմութիւն, 11) Խմբական երգեցողութիւն, 12) Պարտիտուրաների ընթերցումն, 13) Երաժշտական մանկավարժութիւն և փորձնական գործնական պարապմունքներ ստորին դասարանների աշակերտների հետ։ Ջութակի կամ դաշնամուրի վրա նուագելը պարտադիր է։ Դասընթացքներում աւանդում են կօնսերվատօրիայի և սինօդական երաժշտական դպրոցի ուսուցիչներն ու պրօֆեսօրները։ Հայկական բաժինը գտնվում է երաժիշտ-երգահան ԵՂԻՇԷ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ անմիջական հսկողութեան տակ։ Դասընթացքներն աւարտողները ստանում են պաշտաճաւոր վկայականներ, խմբապետի և երգեցող. ուսուցչի կոչումներ։
Հասցէ. Москва, Арбатъ д. № 4. „Регентскіе курсы“.
Դասընթացքների վերատեսուչ՝ ԲԱԳՈՒՄԻԼ ՐԵՇԿԷ
(շ.) 540. 2—1

Բ. Հ. Կուլտուրական Միութեան Հրատարակչական Սեկցիայի Բիւրօն յայտնում է ի գիտութիւն հայ գրողների, որ նա հրատարակում է առանձին գրքոյկներով կամ ժողոված ինքնուրոյն գեղարուեստական գրուածքներ, պատմուածքներ, բանաստեղծութիւններ (չափածոյ), նմանապէս հէքիաթներ և մանկական գրուածքներ։ Վարձատրութիւն տպագրական թերթի համար՝ առնուազն 30 րուբլի։ Բանաստեղծութիւնների համար (չափածոյ) առանձին վարձատրութիւն ըստ որոշման Բիւրօյի։
Բիւրօն նոյնպէս ձեռնարկել է եւրօպական և ռուսական կլասիկների ընտիր երկերի հրատարակութեան գործին. Թարգմանութիւններն անպայման լինելու են բնագրից. վարձատրութիւն իւրաքանչիւր տպագրական թերթի (32 փոքրադիր էջ) 20 րուբլի։ Թարգմանութիւն ստանձնել ցանկացողներից խնդրվում է յայտնել, թէ որ լեզուից են ուզում թարգմանել և ուղարկել, թարգմանութեան մի նմոյշ բնագրի հետ։
Դիմել՝ Баку, Армянскій Культурный Союзъ, Издательская Секція.
(ե.) 530. 2—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.